AZG NEW 1.QXD 6/9/2009 11:12 PM Page 1

Ազգ Azg

10 ՅՈՒՆԻՍ 2009 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 106 (4242)

ISSN: 1829-1651

# Շվեդիայի ԱԳՆ ղեկավարը հերթական անգամ խոչընդոտում է Ցեղասպանության ճանաչմանը

Ըստ Panarmenian.net-ի Շվեդիայի ԱԳՆ ղեկավար Կարլ Բիլդը հերթական անգամ մերժել է Լիբերալ ժողովրդական կուսակցության գրավոր հարցումը Հայոց ցեղասպանությունը ճանաչելու մասին: Ինչպես հաղորդում է CNN Turk-ը, Շվեդիայի ԱԳՆ ղեկավարն ընդգծել է, որ որոշումների ընդունումը, որոնք կարող են փոխել պատմական իրադարձությունների ընթացքը, քաղաքական գործիչների խնդիրը չէ: Բացի դրանից, Կարլ Բիլդն ավելացրել է, որ «ցեղասպանություն» բառի օգտագործումն այս դեպքում կարող է խանգարել խմբերի աշխատանքին, որոնք զբաղվում են պատմական իրադարձությունների ուսումնասիրությամբ:

# Դավութօղլուն արձագանքում է ՀՀ արտգործնախարարին



Հունիսի 8-ին Անկարայում, նախքան Պակիստան ուղեւորվելը, Թուրքիայի արտգործնախարար Ահմեդ Դավութօղլուն մամուլի ասուլիս է հրավիրել: «Իհլաս» լրատվական գործակալության վկայությամբ, այցի նպատակներին անդրադառնալիս նա արձագանքել է նաեւ ՀՀ արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանի «գնդակն այլեւս Թուրքիայի դաշտում է» հայտարարությանը:

Դավութօղլուն մասնավորապես ասել է. «Հայաստանի հարցում արտահայտվող կամքի իրականացման համար ուշի-ուշով հետեւում ենք տարածաշրջանի քաղաքական զարգացումներին: Այս զարգացումները միասնության դեպքում դրականորեն կանդրադառնան տարածաշրջանի վրա: Գնդակը մեր դաշտում գտնվելը գոհացուցիչ է: Ապագան համատեղ կկառուցենք այն դեպքում, եթե գնդակը, դաշտը եւ ջանքերն ընդհանուր լինեն տարածաշրջանի դերակատարների համար»:

Չնայած Դավութօղլուի պատասխանին, արտգործնախարար Նալբանդյանը երեկ Վրաստանում նորից կրկնել է գնդակը Թուրքիայի դաշտում գտնվելու հանգամանքը: Միաժամանակ նա, ինչպես թուրքական հանրային հեռուստատեսությունն է նշում, անդրադարձել է Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների սանկտպետերբուրգյան հանդիպմանը: Նալբանդյանն ասել է, որ հանդիպումը որեւէ առնչություն չունի «ճանապարհային քարտեզի» հետ: Նա մեկ անգամ եւս ընդգծել է, որ Հայաստան-Թուրքիա հաշտեցումը պայմանավորված չէ որեւէ նախապայմանով եւ հուսադրող է համարել առաջխաղացման հավանականությունը հայ-թուրքական հարաբերություններում:

Հ. Չ.

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ

# Խորհրդարանական կեզ թեմաներ

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

## Ծառուկյանը՝ լրագրողներին

ԲՀԿ նախագահ **Գագիկ Ծառուկյանին** Երեւանի ավագանու ընտրությունների արդյունքները չեն գոհացնում. «Լիարժեք դժգոհ չեմ, բայց որ, իրոք, գոհացուցիչ չեն եղել, այդպես է», ասաց նա երեկ Ազգային ժողովի միջանցքում, պատասխանելով լրագրողների հարցերին:

«**Ազգը**» հետաքրքրվեց՝ քաղաքային ավագանիում ակտիվ դիրքորոշո՞ւմ են որդեգրելու ԲՀԿ-ականները, թե՞ դիտորդի կարգավիճակ. «Ես ասել եմ՝ ինչքան մեզ ձայն են տվել, այնքան մենք կարող ենք մեր ժողովրդի ձայներին տեր կանգնել, քանի որ իրենք (ՀՀԿ-ն-Մ.Խ.) մեծամասնական են տարել: Մենք պետք է հետեւողական լինենք այն հարցերում, ինչը համահունչ է մեր ծրագրերին, օգուտ՝ թե՛ քաղաքին, թե՛ մեր ժողովրդին», ասաց:

Ավելացրեց, որ քաղաքային իշխանությունում կոալիցիա չեն կազմելու՝ ՀՀԿ-ն մեծամասնություն է, թող ինքն էլ իր ծրագրերն իրականացնի, իսկ ԲՀԿ-ն հետեւողական է լինելու ժողովրդի փոխարեն:

Նուբարաշենի վարչական տարածքում ԲՀԿ-ից ղեկավար ունենալու վերաբերյալ հարցին պատասխանելիս Գ. Ծառուկյանն ասաց, թե տարիներ ԲՀԿ կուսակցության անդամն այնտեղ է աշխատում. «Բայց եթե առաջարկ լինի՝ կարող ենք դրանից էլ հրաժարվել»: Այս պատասխանից հետո «**Ազգը**» հարց ուղղեց, թե այդ դեպքում ԲՀԿ-ն ընդդիմությո՞ւն է քաղաքային ավագանիում, որին Գ. Ծառուկյանն այսպես արձագանքեց. «Իսկ դուք նման բան նկատե՞լ եք, մենք ընդդիմության կերպարո՞վ ենք երեւում»:

Ինչո՞ւ Ծառուկյանին չեն բավարարում ընդդիմության ստացած ձայները, գուցե ընտրակեղծիքների՞ պատճառով. «Դե, իհարկե, դուք գիտեք, որ ընտրակեղծիքներ եղել են, դատախազությունն այդ հարցով զբաղվում է: Ինչքան որ կա՝ ԲՀԿ-ն գոհ է ժողովրդի վստահությունից, քանի որ միայն մենք ամբողջ պետական լծակի դեմ էինք պայքարում, բայց ամենակարեւորը, որ ժողովրդի մեջ կա վստահություն եւ հավատ, պետք է կարողանանք աշխատել, որ այդ վստահությունն իրականացնենք, ամենաթանկ բանը ժողովրդի վստահությունն ու հավատն են»:

ԱԺ-ում այսօր քվեարկվելիք հարկային փաթեթի մասին էլ ասաց. «Քանի որ ես խոշոր գործերի բաժնետոմսեր ունեմ, դրա համար չեմ խառնվում, որ ավել-պակաս խոսակցություններ չլինեն: Թե չէ ասում են՝ Ծառուկյան Գագիկը հարկերը չի տալիս: Դրա համար ես մի անգամ ասել եմ՝ իմ տարեկան օգուտը կազմում է 35-40 մլն դոլար՝ շահույթը միայն, դիվիդենտները: Էսօր թող մի խոշոր գործարար ներկայացնի իր դեկլարացիան: Ես չեմ խառնվել, իմ կուսակից ընկերներն էլ ազատ էին իրենց կարծիքները հայտնելու մեջ»:

ԲՀԿ-ն նախագահին է ուղարկել առաջարկ՝ համաներում անցկացնելու վերաբերյալ:

Տես էջ 2

# «Ցեղասպանության ճանաչման իրական հնարավորություն կար»

Հայաստանի եւ Թուրքիայի հարաբերությունների կարգավորման հարցում նախապայմաններ չպետք է լինեն, հարաբերությունները պետք է կարգավորվեն ողջամիտ ժամկետներում, նման հայտարարություն արեց ԱՄՆ պետքարտուղարի տեղակալ **Ֆիլիպ Գորդոնը** Երեւանում երեկ նախագահ Սերժ Սարգսյանի, ԱԳ նախարար Նալբանդյանի հետ հանդիպումներից հետո ԱՄՆ դեսպանատանը հրավիրված ասուլիսում: Նրա խոսքերով՝ հայ-թուրքական հարաբերությունների նորմալացումն առանձին գործընթաց է, չպետք է շաղկապել որեւէ այլ բանի հետ: Նրա դիտարկմամբ՝ կողմերը հասկանում են, որ «ողջամիտ ժամկետ» ասվածը չի կարող հավերժ ձգվել եւ իսկապես ողջամիտ ժամկետներում հարաբերությունների կարգավորման համար քայլեր են ձեռնարկում:



ԱՄՆ պետքարտուղարի տեղակալ Ֆիլիպ Գորդոն եւ ԱՄՆ դեսպան Մարի Յովանովիչ

Ֆ. Գորդոնը հայտարարեց, որ այցելել է Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը հավերժացնող Ծիծեռնակաբերդի հուշահամալիր: Նախորդ տարի Ստամբուլում Ֆ. Գորդոնի՝ թուրքերին հղված հորդորի՝ պայքարել Հայոց ցեղասպանության ճանաչման դեմ, լրագրողի հիշեցմանն ի պատասխան ԱՄՆ պետքարտուղարի տեղակալը նշեց, որ դրանք իր խոսքերը չեն: «Ես ասել եմ հակառակը. իմ խոսքը եղել է՝ արեք ինչ ցանկանում եք, եթե ցանկանում եք պայքարել դրա ճանաչման դեմ, լոբբինգ իրականացնել, ժողովրդավարությունը հենց դա է, սակայն հասկացեք, որ այս տարի դուք հաջողություն չեք ունենա: Ես առաջարկել եմ շատ լուրջ մտածել այն մասին, ինչ ցանկանում են անել, քանի որ Կոնգրեսում ճանաչման հնարավորություն էր բացվել, ԱՄՆ-ում միտումներն այնպիսին էին, որ Հայոց ցեղասպանության ճանաչման իրական հնարավորություն կար»,- պարզաբանեց նա, ինչպես հաղորդում է «Արմենպրեսը»:

*Ֆիլիպ Գորդոնի մասին տեղեկություններ կարդացեք 5-րդ էջում՝ Հարութ Սասունյանի հոդվածը:*

# Թուրք Աթալայը ծաղկեպսակ է դրել Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին

**Ըստ «Հայերն այսօր» էլեկտրոնային պարբերականի, «Բիզ-Միասին» (Մենք-Միասին) ֆրանսիական կազմակերպության համահիմնադիր, ազգությամբ թուրք Միշել Աթալայը եւ ֆրանսահայ հայտնի դերասան Դենիս Տոնիկյանը ծաղկեպսակ են դրել Փարիզի Կոմիտասի արձանի առջեւ՝ ի հիշատակ Հայոց ցեղասպանության զոհերի: Թուրքիայի Կեսարիա քաղաքում ծնված Միշել Աթալայը Ֆրանսիայի Կանաչների կուսակցության անդամ է: «Ֆրանս Արմենի» ամսագրին տված հարցազրույցում նա նշել է, որ Հայկական հարցի նկատմամբ իր վերաբերմունքը փոխվել է Հրանտ Դինքի սպանությունից հետո: Նրա վրա մեծ ազդեցություն է ունեցել նաեւ հայազգի հայտնի դերասան Դենիս Տոնիկյանը, որը վերափոխել է նրա ազգայնամոլական դաստիարակությունը եւ ստիպել իրականությանը նայել իբրեւ ողջամիտ մարդ:**

**Հիշեցնենք, որ Դենիս Տոնիկյանը «Արամ» ֆիլմում թուրք դիվանագետի դերակատարն է: Իսկ «Բիզ-Միասին»-ը արմատներով հայ եւ թուրք ֆրանսիացիների ստեղծած կազմակերպություն է, որի նպատակն է ֆրանսիական հասարակությանը ներկայացնել ցեղասպանության իրական պատկերը:**

# Դրական համարվող 8 միավորի շեմը չի իջեցվել

«Հայերենի քննական թեստերն իրականում բարդ են եղել, սակայն դժվարությունները բոլորն են անցել, եւ ակնկալածից ցածր գնահատականներ ստացել են բոլորը», նման մեկնաբանություն տվեց լրագրողներին ԿԳ նախարար **Արմեն Աշոտյանը**՝ հունիսի 5-ին կայացած հայոց լեզու եւ գրականություն միասնական քննության նախնական արդյունքների վերաբերյալ: Ըստ նրա՝ այս առարկայից միջին գնահատականը նախորդ տարվա համեմատ նվազել է՝ հասնելով 11,5 միավորի: Անբավարար ստացածների թիվը մոտ 9,5 տոկոս է, գերազանց՝ 3,5: 12 հազար քննություն հանձնածներից քսան միավոր ստացել է ընդամենը 12 երեխա: Քննական առաջադրանքները թեպետ բառացիորեն չեն կրկնում ուղեցույցներն ու ծրագիրը, սակայն համահունչ են եղել ընդհանուր ծրագրին: Ա. Աշոտյանը հերքեց նաեւ քննությունից 40 տոկոս անբավարար միավորների լուրը: «Շրջանառվող այն լուրերը, որ 40 տոկոսից ավելի են «կտրվողները», իրականությանը չեն համապատասխանում, ինչպես նաեւ ճիշտ չէ դրական համարվող 8 միավորի շեմն իջեցնելու մասին լուրը», ընդգծեց նա: Ա. Աշոտյանը կոչ արեց քննություն հանձնողներին ու նրանց ծնողներին հիմնավոր բողոքների դեպքում անպայման օգտվել գնահատականը գանգատարկելու իրավունքից:

# Խայտառակ պարտություն

Ֆուտբոլի Հայաստանի երիտասարդական հավաքականը Եվրոպայի առաջնության ընտրական մրցաշարի հերթական խաղում 2-5 հաշվով խայտառակ պարտություն կրեց թուրքերից: Հյուրերը տեմպային, ատլետիկ ֆուտբոլ ցուցադրեցին՝ հաճախակի դիմելով սուր եզրային ճեղքումների: Հենց նման խաղի շնորհիվ էլ նրանք արդեն երկրորդ խաղակեսի սկզբին վճռեցին խաղի ելքը: Մեր ֆուտբոլիստները միայն 4 գնդակ ընդունելուց հետո կարողացան քիչ թե շատ բեկում մտցնել մրցակցությունում եւ Մխիթարյանի ու Դաշյանի խփած գոլերի շնորհիվ կրճատել խաղի հաշիվը: Սակայն դա միայն սփոփանք էր:



Կառավարության ներկայացրած հարկային փոփոխությունների փաթեթի խոշոր հարկատուների հարկման խնդրին անդրադառնալիս («Հարկային ներկայացուցիչը կդառնա առեւտրային գաղտնիքի տե՞ր», 13 մայիսի, 2009), ընդգծել էինք խոշոր բիզնեսի հարկմանն առնչվող որոշ դրույթների անընդունելի եւ վտանգավոր լինելը: Մասնավորապես, ըստ նոր առաջարկի, խոշոր ընկերությունը պարտավոր էր ապահովել հարկային ներկայացուցչի «անարգել» մուտքը իր գտնվում սեփական գրպանը լցնելու: Այս փաստը բազմիցս հաստատել է նաեւ վարչապետ Տիգրան Սարգսյանը, խոսելով հարկային եւ մաքսային կառույցներում բարեփոխումների ծրագրի անհրաժեշտության մասին:

Ստեղծվել է, կարելի է ասել, փակուղային իրավիճակ: Մի կողմից կառավարությունը ունի խնդիր` ստվերից դուրս բերելու եւ պարտադրելու փաստաթղթավորել խոշոր բիզնեսի իրական շրջանառությունը, ինչ-որ առումով գոհացնելու փոքր եւ միջին բիզնե-րապահել խոշոր բիզնեսը հարկման լիարժեք դաշտ բերելը խիստ վտանգավոր է: Այսինքն, անազնիվ մարդկանց միջոցով հնարավոր չէ հաղթահարել մեկ այլ անազնվություն, եթե չկա արդյունավետ համակարգ, որը բացառի կամ էապես նվազեցնի հարկային ներկայացուցիչների չարաշահումներ թույլ տալու հավանականությունը: Թվում է, թե այս վիճակից դուրս գալու տարբերակներ չկան: Այդուհանդերձ, կարող ենք առաջարկել տարբերակ, որը թվում է, թե կարող է բավարա-

# Ստվերից դուրս բերել խոշոր բիզնեսը եւ բացառել հարկային չարաշահումը

## *Ինչպես է դա հնարավոր անել*

վելու կամ կառավարման որոշումներ ընդունելու, օպերատիվ ֆինանսական ղեկավարման վայրեր, ինչպես նաեւ հասանելի դարձնել իր տեղեկատվական եւ ծրագրային համակարգերը: Այս դրույթի ընդունումն իր հետ կբերեր հարկային ներկայացուցիչների կողմից ընկերության առեւտրային գաղտնիքին տեղյակ լինելու եւ գործարարին շանտաժի ու շորթման ենթարկելու հնարավորություն:

Ազգային Ժողովում վերջին օրերի քննարկումների ժամանակ այս եւ մի քանի այլ դրույթներ կառավարությունը հանեց եւ հարկային ներկայացուցիչների ներկայությունը խոշոր ընկերություններում սահմանափակեց միայն առաքման, տեղափոխման եւ վաճառքի վայրերով: Սակայն սա նույնպես բավարար չհամարվեց պատգամավորների, այդ թվում իշխանական կոալիցիայի մեջ գտնվողների, ինչպես նաեւ խոշոր բիզնեսի ներկայացուցիչների կողմից: Նրանք պահանջում են ընդհանրապես բացառել հարկային ներկայացուցիչների առկայությունը ընկերություններում: Հիմնական փաստարկն այն է, որ հարկային ներկայացուցիչները անազնիվ են եւ իրենց ընձեռված այդ հնարավորությունից կձգտեն անձնական շահ կորզել: Ակնհայտ է, որ այս փաստարկը միանգամայն ընդունելի է եւ հարկային կառույցի աշխատակիցները առիթը չեն կորցսին, որը դժգոհում է խոշորների հաշիվ-ապրանքագրեր չտրամադրելու փաստից, մյուս կողմից` խոշոր բիզնեսը եւ քաղաքական որոշ ուժեր, մատնանշելով ձեռնարկություններում հարկային ներկայացուցիչների առկայության հնարավոր վտանգները, դեմ են արտահայտվում դրան: Ի՞նչ պետք է անել:

Հիմնական խնդիրը, որ պետք է լուծվի, առնչվում է ազնվության բացակայությանը կամ պակասին: Ի սկզբանե անազնիվ է խոշոր բիզնեսը, որը հրաժարվում է հաշիվ-ապրանքագրեր տրամադրել մյուս տնտեսվարողներին: Եթե բիզնեսը լիներ ազնիվ եւ չթաքցներ իր շրջանառության զգալի մասը, ապա հարկային ներկայացուցիչների առկայության անհրաժեշտությունը չէր առաջանա: Երբ փոքր ու միջին բիզնեսի փաստաթղթաշրջանառությունը բացահայտելու համար ներդրվեցին հսկիչ-դրամարկղային մեքենաները, խոշոր բիզնեսը պետք է ցուցաբերեր անհրաժեշտ մոտեցում եւ փոքր օբյեկտներին տրամադրեր հաշիվ-ապրանքագրերը: Դա չարեց եւ այժմ բողոքում է հարկային ներկայացուցիչներից, միաժամանակ չանելով ոչ մի այլ առաջարկ: Այսինքն, խոշոր բիզնեսը ցանկանում է իրավիճակը թողնել այնպես, ինչպես կա եւ մնալ ստվերում: Դա անընդունելի է:

Սակայն, մյուս կողմից էլ հարկային ներկայացուցիչներին վե-րել բոլոր կողմերին` կառավարությանը, խոշոր բիզնեսին, փոքր ու միջին բիզնեսին եւ ի վերջո` բոլորիս:

Խոշոր ընկերություններում հարկային ներկայացուցիչների միանձնյա առկայության փոխարեն ավելի ճիշտ եւ առարկայական կլինի ընդգրկել հենց գործարարներին միավորող կառույցների` Հայաստանի արդյունաբերողների եւ գործարարների, Հայաստանի առեւտրաարդյունաբերական պալատի, «Հայաստանի վաճառականներ» կազմակերպության ներկայացուցիչներին: Քանի որ խոսքը երկու-երեք տասնյակից ոչ ավելի ընկերությունների մասին է, ապա դժվար չէ յուրաքանչյուր ընկերության առաքման, տեղափոխման եւ վաճառքի ընթացքը վերահսկելու համար, բացի հարկային ներկայացուցիչներից, ընդգրկել նաեւ գործարարներին միավորող վերնշյալ հասարակական կազմակերպությունների մեկական ներկայացուցիչներ: Այս դեպքում արդեն հարկային ներկայացուցիչները չեն կարողանա ապօրինի քայլերի գնալ, իսկ խոշոր բիզնեսն էլ չի կարող շարունակել թաքցնել ստվերը: Համատեղ, մեկը մյուսին հակակշռող աշխատանքն ավելի արդյունավետ եւ վտանգներից զերծ կլինի: Մնում է միայն հստակեցնել մեխանիզմը, որը կապահովի այս գործընթացի սահուն ընթացքը:

**ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**



# Խորհրդարանական կեզ թեմաներ

1-ին էջից

## Հարկային փաթեթը կքվեարկվի այսօր կամ էլ` եսի՞մ

**ԱԺ նախագահի Հովիկ Աբրահամյանը երեկ առավոտյան դեռ տեղեկացրեց, որ քննարկված հարկային փաթեթի քվեարկությունը տեղափոխվում է այսօր, քանի որ դրա վերաբերյալ քաղաքական քննարկումները շարունակվում են, եւ անգամ չբացառեց, որ կառավարությունը կարող է հետ վերցնել այն: Տնտեսական հանձնաժողովի նախագահի Վարդան Այվազյանն «Ազգին» տեղեկացրեց, որ քննարկվում է արտադրությունից հարկային ներկայացուցչին դուրս բերելու, այսինքն` հարկային հետախույզի փոխարեն հարկային հաշվող ունենալու հարցը, ըստ նրա` արտադրության մեջ վերահսկողության մեխանիզմ չպետք է ունենա հարկայինը: Եթե այս հարցում կառավարությունը չհամաձայնի, ըստ Այվազյանի, ԱԺ-ն կարող է դեմ քվեարկել փաթեթին:**

## Սամվել Նիկոյանը` լրագրողներին



**ԱԺ փոխնախագահի, մարտի 1-ի դեպքերը քննող ԱԺ ժամանակավոր հանձնաժողովի նախագահի Ս. Նիկոյանը, պատասխանելով փաստահավաք խմբի լուծարման մասին լրագրողների հարցերին, տեսակետ հայտնեց, որ այդ խմբի վրա հանդուրժողականության մթնոլորտում համերաշխ աշխատելու խնդիր էր դրված, բայց խմբի անդամները չկարողացան դա իրականություն դարձնել, ինչի համար Նիկոյանը ցավում էր. «Նրանք խախտել էին նախագահի այն կարգադրությունը, որ գործելու էին ոչ հրապարակային պայմաններում, ինչը, կարծում եմ, երկրորդական է, ամենակարեւորն այն է, որ չէին կարողանում միասին աշխատել... Փաստահավաք խումբը փաստորեն չկարողացավ հեռու եւ զերծ մնալ քաղաքական ճնշումներից», ասաց նա` ավելացնելով, թե նրա անդամներից եղան, որ իրենց գործունեությունը ծառայեցրին այն մարդկանց պահանջին, ում կողմից նրանք նշանակվել էին: Նա ափսոսաց, որ փաստահավաք խմբի կատարած բավական աշխատանքը դարձավ քաղաքական շահարկման կամ ինչ-որ մի հանրահավաքում քննարկման թեմա:**

**Երեկ առավոտյան փաստահավաք խմբի նախկին ղեկավարը հավաքված բոլոր փաստերն արձանագրությամբ հանձնել է ԱԺ ԺՀ-ին, իսկ եթե այդ խմբի այլ անդամներ եւ ռուհասարակ հասարակության այլ միավորները կամ անդամները այլ փաստեր ունեն` Նիկոյանը խնդրում է, որ մինչեւ հունիսի վերջ տրամադրեն հանձնաժողովին, եւ անգամ` եթե չեն ուզում տրամադրել, հրապարակեն մամուլում, քանի որ փաստահավաք խմբի 6 ամսվա եւ ԺՀ-ի 1 տարվա աշխատանքի արդյունքում շուտով ԺՀ-ն ձեռնամուխ է լինելու ամփոփիչ զեկույցի նախապատրաստմանը. «Հանձնաժողովը ստեղծվելուց հետո անցել է դաժան քննադատությունների, փորձությունների ճանապարհ, հիմա էլ այդ փորձությունների հերթական փուլն է, եւ դա էլ մենք կհաղթահարենք», ասաց Նիկոյանը:**

## Հովիկ Աբրահամյանի հեղինակած օրինագիծը

**Այս օրենքը` «ՀՀ ԱԺ-ի աշխատակազմում պետական ծառայության մասին», որոշ սկզբունքային հարցերում փոխում է ոլորտում դրվածքը. օրինակ` աշխատակազմում նոր հաստիք առաջանալու դեպքում մինչեւ այժմ փակ մրցույթների համակարգն էր աշխատում նախ, իսկ նոր առաջարկով փակ մրցույթի ինստիտուտը հանվում է եւ բաց մրցույթ է անցկացվելու, որին դրսից դիմողներ էլ կարող են մասնակցել, բացի այդ` մրցույթի անցկացման գործընթացում նախնական հարցազրույցը դառնում է պարտադիր: Կրտսեր խմբի պաշտոնյաների համար եւս բարձրագույն կրթությունը պարտադիր է դառնում: Աշխատակազմի ղեկավարների խորհրդականներն ու օգնականները, փորձագետները, որ նախկին օրենքով չէին համարվում պետծառայող, այժմ նրանց աշխատանքի տարիները համարվելու են պետական կառավարման ոլորտի ստաժ, որն այլեւս խոչընդոտ չի լինի որակյալ կադրերի համար` այս ոլորտ ներհոսելու: Մի խոսքով` այս օրենքով, որն արդեն առաջին ընթերցմամբ երեկ ընդունվեց, ԱԺ նախագահն իր աշխատակազմի ազատված հաստիքները հույս ունի համալրել որակյալ կադրերով:**

# Երկու նոր կառույցի առաջարկ

**Երեկ ԱԺ հայտարարությունների ժամին ՀՀԿ-ական Հայկ Սանոյանն առաջարկեց խորհրդարանին կից ստեղծել սփյուռքահայերի պալատ, որտեղ կքննարկվեն սփյուռքի խնդիրները, իսկ ՀՅԴ խմբակցության ղեկավար Վահան Հովհաննիսյանն էլ առաջարկեց պետական կեղծարարությունների (ասաց` ֆալսիֆիկացիաների-Մ.Խ.) դեմ մի կառույց կամ մարմին ստեղծել խորհրդարանում, որը կկարողանա այդպիսի կեղծարարությունների դեմն առնել (նա բերեց պատմաբանների հանձնաժողով ստեղծելու թուրքական առաջարկը, որն այդպիսի մարմնի գործունեությամբ կչեզոքացվի):**

**Մ. Խ.**

# «Օրանժը» կարեւորելու է շարժական ինտերնետ կապի զարգացումը Հայաստանում

**Հայաստանում գտնվող «Ֆրանս տելեկոմ» («Օրանժ») ընկերության բջջային կապի գծով փոխնախագահ Օլաֆ Սուանեին երեկ Հայաստանում Ֆրանսիայի դեսպանատանը ընդունեց մի քանի լրատվամիջոցների ներկայացուցիչներին, ներկայացրեց Հայաստանում ընկերության գործունեության հեռանկարները եւ պատասխանեց հարցերին:**

**Օլաֆ Սուանեին հավաստիացրեց, որ չնայած համաշխարհային բարդ ֆինանսատնտեսական իրավիճակին, «Ֆրանս տելեկոմը» կկատարի Հայաստանում իր նախանշած ներդրումները: 200 մլն դոլար ներդրումներից 80 մլն դոլարը կկատարվի մինչեւ այս տարվա վերջ: Ըստ ընկերության ներկայացուցչի, ներկայումս իրենց մոտ աշխատում է 150 մարդ, բայց աշխատատեղերի ընդհանուր թիվը կկազմի 600: Օլաֆ Սուանեին ընդգծեց, որ բացի բջջային եւ ինտերնետ կապի մատակարարումից, ընկերությունը կարեւորելու է շարժական ինտերնետ կապի զարգացումը Հայաստանում: Նա նշեց, որ եթե բջջային կապի ներթափանցումը 80 տոկոս է, իսկ ինտերնետ կապինը` 25 տոկոս, ապա շարժական ինտերնետից օգտվողների թիվը շատ փոքր է: Կապի այդ տեսակը զարգացնելու համար, «Ֆրանս տելեկոմի» ներկայացուցչի հավաստմամբ, ներդրվելու են վերջին սերնդի նորագույն սարքավորումները:**

**Ա. Մ.**

# Առաջիկայում գնաճի ցուցանիշները մնալու են բարձր

Երեկ ԿԲ նախագահի **Արթուր Ջավադյանը** պատգամավորների քննարկմանը ներկայացրեց ՀՀ դրամավարկային քաղաքականության ծրագիրը (գնաճի հաշվետվություն, 2009 թվականի առաջին եռամսյակ): Ջավադյանն ասաց, որ համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամն իր ազդեցությունն է ունեցել Հայաստանի տնտեսության վրա եւ առաջիկայում գնաճի ցուցանիշները մնալու են բարձր: Նախատեսվում է, որ ՀՆԱ-ն կնվազի 3 տոկոսով, կանխատեսվում է հետագա գնաճ: Տնտեսական անկումը նախատեսվում է 5,8 տոկոս, տարվա երկրորդ կիսամյակում կուժեղացվեն հակաճգնաժամային քայլերը, կանխատեսվում է, որ դրանք բարերար ազդեցություն կունենան տնտեսության վրա:

ԱԺ ֆինանսավարկային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ **Գագիկ Մինասյանը** ներկայացրեց հանձնաժողովի դրական եզրակացությունը:

**Ն. Մ.**

# Ձերբակալվել է թիվ 7/07 ՏԸՀ անդամը

Հատուկ քննչական ծառայությունից հայտնում են, որ Երեւանի ավագանու ընտրությունների ժամանակ թիվ 7/07 ընտրական տեղամասի քվեարկության արդյունքները կեղծելու դեպքի առթիվ հատուկ քննչական ծառայության վարույթում քննվող քրեական գործով այսօր ձերբակալվել է թիվ 7/07 տեղամասի ընտրական հանձնաժողովի անդամ Դավիթ Սարգսյանը: Նա կասկածվում է քրեական օրենսգրքի 150-րդ հոդվածով նախատեսված արարք, այն է` լցոնման եղանակով քվեարկության արդյունքները կեղծելու մեջ:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԺԸ տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221

Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960

Լրագրողների սենեակ / հեռ 581841

Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483

*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն* / հեռ 529353

Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

AZG NEW 3.QXD 6/9/2009 8:52 PM Page 1



# Նյութականացող հասարակությունն ավելի հեշտ կառավարելի է

## *Ընտրական իրավունքին նվիրված քննարկում՝ հանրային լինելու հավակնությամբ*

Ընտրական իրավունքը քննարկման թեմա էր երեկ «Երեւան» հյուրանոցում «Սիվիլիթաս» հիմնադրամի հրավիրած հանդիպմանը, որտեղ հիմնադրամի խորհրդի նախագահ, Հայաստանի նախկին արտգործնախարար **Վարդան Օսկանյանը** եւ մարդու իրավունքների պաշտպան **Արմեն Հարությունյանը** ներկայացրին որոշ դիտարկումներ, ինչին հետեւեց քննարկում՝ մասնակիցների ավելի լայն շրջանակով:




Վարդան Օսկանյանն, ի մասնավորի, քննարկման համար երկու հարց կարեւորեց. նախ՝ ո՞րն է պատճառը, որ «մենք չենք կարողանում անցկացնել նորմալ, արդար ընտրություններ», եւ երկրորդ՝ «ի՞նչ կարելի է անել նորմալ, արդար ընտրություններ անցկացնելու համար»:

«Չեմ ուզում քննարկել վերջին ընտրությունները, քանի որ, կարծում եմ, ունենք ընդհանրական դիրքորոշում՝ նորմալ ընտրություններ չենք անցկացրել», հայտարարեց Օսկանյանը, հավելմամբ, որ երեւի թե բացառությամբ 1991-ի ընտրությունների, այդուհետեւ Հայաստանում արդար ընտրություններ տեղի չեն ունեցել:

Հայաստանի նախկին արտգործնախարարը մի քանի խնդիր առանձնացրեց՝ համապատասխան դիտարկումներով: Մասնավորապես, Օսկանյանի մատուցմամբ, արդար ընտրությունների ինստիտուտը նախապայման է պետականության կայացման եւ բարգավաճման համար: Միեւնույն ժամանակ ազատ ընտրությունը ժողովրդավարության եթե ոչ բավարար, գոնե անհրաժեշտ պայման է, որը ենթադրում է ինչպես ընդդիմության, այնպես էլ իշխանության մասնակցություն, որում ընդդիմությունն ընտրությունները չի դիտարկում որպես նախկին իշխանություններից ձերբազատվելու տարբերակ: Իշխանությունն էլ իր հերթին ոչ թե պետք է վախենա ազատ, արդար ընտրություններից, այլ հանդուրժի:

Մարդու իրավունքների պաշտպան Արմեն Հարությունյանը քիչ ավելի իրավական դաշտում դիտարկելով հարցը, կարեւորեց, որ ընտրական իրավունքն ավելի հաճախ շփոթվում է քվեարկության հետ: Այնուամենայնիվ, ընտրական համակարգը որեւէ երկրում այնպիսին է, ինչպիսին քաղաքական համակարգն է:

Հայաստանի օմբուդսմենն այս համատեքստում նախ կարեւորում է արժեքային համակարգը, քանի որ մեր հասարակությունը նյութականացված է, ինչն այն ավելի հեշտ կառավարելի է դարձնում: Եվս մեկ խնդիր, ըստ օմբուդսմենի, պատասխանատվության հարցն է, քանի որ պատասխանատվություն չեն կրում միայն անհաջողությունների, այլեւ՝ հաջողությունների համար: «Այս ընտրությունների ընթացքում հաղթող ուժի խնդիրն է, որ ստանձնում է ավելի բարձր պատասխանատվություն, ընդդիմությունն էլ չպետք է ընկճվի, այլ պետք է կրի իր պատասխանատվությունը՝ փորձելով կատարելագործվել»: Այսպիսին է Արմեն Հարությունյանի կարծիքը, հավելմամբ, որ ընդդիմությունը պետք է մտածի, թե ինչո՞ւ, ըստ օմբուդսմենի, Երեւանի կեսն՝ ընդդիմադիր լինելով, չգնաց ընտրության:

Որպես եզրակացություն Հարությունյանն ընդգծեց, որ այս ամենից աճում է ժողովրդի անտարբերությունը, ինչը, թերեւս, ամենավտանգավորն է:

Որքան էլ Վարդան Օսկանյանն ի սկզբանե առաջարկել էր քննարկել ընտրական իրավունքը, քննարկման մյուս մասնակիցները՝ Երեւանի ավագանու ընտրությունների մասնակից Տիգրան Կարապետյանը, Աղասի Արշակյանը, Հովհաննես Իգիթյանն ավելի շատ խոսեցին մայիսի 31-ին կայացած ընտրությունների խախտումներից ու կեղծիքներից, ընդհանուր դիտարկմամբ, որ այդ ամենում մեղավոր է իշխանությունը:

Այնուամենայնիվ, ողջունելի այս քննարկումը դժվար է կոչել հանրային, հատկապես որ, չնայած քաղաքականության տեսության համաձայն շահերը կարող են լինել միակ հավերժականը, պետք է փաստել, որ անգամ շահերը կարող են փոփոխվել, երբ քաղաքական այս դաշտից անցնում ես մյուսին:

Ամեն դեպքում, ընտրական իրավունքի քննարկման համատեքստում հետաքրքրական էր Տիգրան Կարապետյանի դիտարկումը, թե Վարդան Օսկանյանն սկսել է ապագա խորհրդարանական ընտրություններին իր մասնակցության պայքարը:

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Գեղարքունիքի խնդիրներին է անդրադառնում տեղի մարզպետը

**Տարածքային կառավարման նախարարությունում երեկ լրագրողներին հանդիպեց եւ մարզի սոցիալ-տնտեսական վիճակի ու հիմնախնդիրների մասին խոսեց Գեղարքունիքի մարզպետ Նվեր Պողոսյանը:**

**Հունիսի երկրորդ տասնօրյակում Գեղարքունիքի մարզից ԼՂՀ Մարտունու շրջան կմեկնի 7 կոմբայնից բաղկացած շարժակազմ՝ օժանդակելու այդ շրջանի հացահատիկի բերքահավաքին: Ասուլիսում հայտարարեց Նվեր Պողոսյանը:**

**Մարզում այս տարի ցանվել են 33 հազար հա գարնանացան հացահատիկային մշակաբույսեր եւ 16 հազար հա կարտոֆիլ: Այս տարվա ընթացքում մարզում սուբսիդավորվելու են 33 հազար հա գարնանացան գարու եւ ցորենի ցանքեր, որից կօգտվի 30 հազար գյուղացիական տնտեսություն:**

**Մարզում նախորդ տարի 300 000 տոննա կարտոֆիլ է աճեցվել, «որի իրացման խնդիրն այսօր պրոբլեմ է առաջացրել մեզ համար»: Ն. Պողոսյանն ասաց, որ նախորդ տարիներին կարտոֆիլն արտահանվում էր, իսկ այս տարի գյուղացիները հույսը դրել են տեղական շուկայի վրա:**

**Մարզպետն անդրադարձավ նաեւ Սեւանի ավազանում ոսկու վերամշակման գործարանի կառուցման հետ կապված մտահոգություններին: Նվեր Պողոսյանի փոխանցմամբ՝ այդ հարցով մարզպետարանը պաշտոնական որեւէ տեղեկագիր կամ փաստաթուղթ չի ստացել: Այդուամենայնիվ, մարզպետարանում տեղյակ են, որ ընթանում են բուռն քննարկումներ:**

**«Եթե պետք է Սեւանի ջուրը թունավորվի, ապա մեզ այդպիսի ձեռնարկություն պետք չէ», ասաց մարզպետը եւ առաջարկեց մեկ այլ տարբերակով էլ մտածել. «Իսկ եթե մարդիկ կարող են այնպիսի պայմաններ ստեղծել, որ ջրին ընդհանրապես վնաս չտան եւ կարողանան աշխատատեղեր ստեղծե՞լ»:**

**Սեւանի հետ կապված խնդիրները, սակայն, սրանով չեն սահմանափակվում: Ներկայումս ջրի աղտոտման հարցում «մեղավոր են» նաեւ ավազանի բնակավայրերի մաքրման չգործող կայանները: Նվեր Պողոսյանը փոխանցեց, որ հունիս ամսից արդեն աշխատանքները սկսվելու են՝ Մարտունու, Վարդենիսի եւ Գավառի մաքրման կայանները պետք է կառուցվեն: Գումարը հատկացնում է Համաշխարհային բանկը:**

**Լճի մակարդակի բարձրացումից խնդիրներ նույնպես կան: Նվեր Պողոսյանն ասաց, որ շուրջ 5 հազար հեկտար հողի կորուստ է լինելու, որից 2000-ը անտառածածկ տարածք է, սակայն խնդիրներն ավելի շատ կապված են այդ տարածքները մաքրելու հետ: Այս պահին արդեն մոտ 1000 հեկտար անցել է ջրի տակ, որից 400 հեկտարը մաքրվել է մասամբ, իսկ 600-ը մաքրելու համար արդեն կառավարությունը գումար է հատկացրել՝ 257 միլիոնի չափով: Տարածքը կմաքրվի ամառվա ընթացքում, խոստացավ մարզպետը:**

**Մեկ այլ գլխացավանք են ապօրինի շինությունները: Մարզպետն ասաց, որ դրանք ինքը ժառանգություն է ստացել նախորդից, իր օրոք ապօրինի շինարարությունները լճի մերձակայքում դադարեցվել են, իսկ արդեն գոյություն ունեցողների հարցը պետք է լուծվի, թե ինչ ձեւով՝ քննարկումները շարունակվում են:**

**«Այս պահին ունենք շուրջ 1600 ապօրինի շինություն, որի մեջ մտնում են նաեւ վագոն-տնակները, որոնք տեղադրվել են առանց թույլտվության»:**

**Քաղաքաշինության մասին խոսելիս մարզպետը նշեց, որ 3 մլրդ 200 մլն դրամի աշխատանք մարզում պիտի կատարվեր, սակայն ճգնաժամի պատճառով դրանց մի մասը տեղափոխվել է 4-րդ եռամսյակ: «1.5 մլրդ դրամի աշխատանքներ իրականացվելու են դպրոցաշինության ուղղությամբ, մրցույթներն ընթացքի մեջ են, գումարներ տրամադրելու է նաեւ մարզպետարանը», տեղեկացրեց Նվեր Պողոսյանը:**

Ն. ՄՈՒՐԱԴՅԱՆ

ԿՐԹԱԿԱՆ

# Մեկնարկեց մաթեմատիկայի միասնական քննությունը

**Փաստ է, որ մեր հանրապետությունում վաղուց չեն հավատում երկու նորության՝ երբ ասում են, որ ընտրություններն անցել են արդար եւ թափանցիկ, մեկ էլ, երբ հայտարարում են, թե ավարտական եւ ընդունելության քննությունների ժամանակ կաշառակերության դեպքեր չեն գրանցվել: Թե ինչու է այսպիսի (հաճախ իրավացի) մտայնություն տարածվել հասարակության մեջ, այլ որակումներ չտալու համար բնորոշենք մեկ չարչրկված բառով՝ մենթալիտետ: Որպեսզի ամեն ինչը լինի տեղին, խախտումներ չգրանցվեն, բամբասանքներ չհնչեն, ԿԳ նախարար Արմեն Աշոտյանը մտադրվել է քննությունների ժամանակ այցելել ոչ միայն երեւանյան միջնակարգ դպրոցներ, այլեւ մարզեր:**

**Երեկ մաթեմատիկայի միասնական քննության ընթացքին նախարարը հետեւեց Աշտարակի թիվ 4 միջնակարգ դպրոցում՝ կոչ անելով աշակերտներին կենտրոնանալ եւ ուշադիր կարդալ առաջադրանքները: ՀՀ-ում եւ ԼՂՀ-ում նախատեսված է 9.806 հոգու մասնակցություն, ձեւավորվել է 36 քննական կենտրոն: Աշտարակում պատանիներից առավել հուզված ու անհանգստացած էին դպրոցի բակում հավաքված ծնողները: Նրանք հիմնականում բողոքում էին մաթեմատիկայի համար հատկացված երկու ժամից: Ծնողները նկատում են, որ երկու ժամը չափազանց քիչ է հուզմունքը հաղթահարելու եւ առաջադրանքները լուծելու համար:**

**«Երկու ժամ ենք նախատեսել, որպեսզի երեխան ոչ թե իր ընկերոջ դարդով ապրի, սիրած աղջկան հուշի, այլ իր մասին մտածի», յուրօրինակ պատասխան հնչեցրեց Աշոտյանը՝ հավաստիացնելով, թե նախորդ տարիների փորձը ապացուցել է հատկացված վերջին մեկ ժամի ավելորդությունը:**

**Քննական գործընթացին ծանոթանալու համար Աշտարակ էր այցելել նաեւ Համաշխարհային բանկի ներկայացուցչությունը՝ Խուան Մանուել Մորենոյի գլխավորությամբ: ՀԲ ֆինանսավորմամբ Հայաստանում ավարտվում է «Կրթության որակ եւ համապատասխանություն» վարկային ծրագրի առաջին մասը, այժմ ամփոփվում են արդյունքները: Նույն ծրագրի շրջանակներում է ձեւավորվել նաեւ Գնահատման եւ թեստավորման կենտրոնը:**

**Անդրադառնալով հայոց լեզվի միասնական քննությանը՝ նախարարը նկատեց, որ այն բարդ է եղել՝ նախատեսված տարբեր գիտելիքների ու իմացության համար: Ըստ նախնական տվյալների, հայոց լեզվի միջին միավորը 11,5 է, անբավարար՝ 9,5 տոկոսը, հուսադրող չէ նաեւ գերազանց արդյունքը՝ ընդամենը 3,5 տոկոս: «Այստեղ են ասում՝ հազարից մեկն է 20 միավոր ստանում», նկատեց Աշոտյանը:**

**Թերթերից մեկում տպագրված թեստերի արտահոսքի մասին տեղեկությունը ԿԳ նախարարն անվանեց զրպարտություն:**

**«Թերթում տպագրված տարբերակը եւ իրական թեստը կարող եք համեմատել եւ տեսնել, որ իրականում դրանք բոլորովին տարբեր են: Եթե արտահոսք լիներ, միջին բալը չէր իջնի, եւ մենք կունենայինք ոչ թե 3,5 տոկոս գերազանց ստացածների թիվ, այլ՝ ավելի շատ», ասաց նախարարը՝ հավաստիացնելով, որ նախարարությունը քաղաքականություն է իրականացնում թեստերի որակը բարելավելու համար:**

### Արդյունքները հուսադրող չեն

**Երեկ ԳԹԿ-ն ամփոփեց նաեւ կենսաբանության, ընդհանուր պատմության եւ աշխարհագրության միասնական քննությունների արդյունքները: Կենսաբանության առարկայի համար ներկայացվել է 1811 հայտ, քննության միջին միավորը կազմել է 11.7, 20 միավոր ստացել է ընդամենը մեկ աշակերտ: Ընդհանուր պատմության քննության հայտ են ներկայացրել 541 հոգի, միջին միավորը՝ 12-ն: Աշխարհագրության միասնական քննության միջին միավորը կազմել է 13: Վերջին երկու քննությունների ժամանակ 20 միավոր ստացող չի եղել:**

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Աշտարակ-Երեւան

# Առաջատար սոցիոլոգներն ամռանը կժամանեն Հայաստան

2009-ի հունիսի 11-14-ը ԵՊՀ-ում կանցկացվի Սոցիոլոգիայի համաշխարհային կոնգրեսը, որը կրելու է «Սոցիոլոգիան խաչմերուկներում» խորագիրը: Սոցիոլոգիայի միջազգային ինստիտուտի 39-րդ համաշխարհային կոնգրեսի համակազմակերպիչներն են Երեւանի պետական համալսարանը եւ Առաջատար ուսումնասիրությունների շվեդական կոլեգիումը:

Կոնգրեսի ընթացքում քննարկվելու են սոցիալական գիտությունների տեսական եւ մեթոդաբանական նվաճումները, մարդկության առջեւ ծառացած արդի երկընտրանքները, գլոբալ ճգնաժամը, դրա հետեւանքները եւ հաղթահարման հնարավորությունները, հասարակությանը, անձին եւ պետությանը միտված մարտահրավերները, դե ֆակտո պետությունները ժամանակակից աշխարհում, սփյուռքի եւ հայրենիքի պատկերացումները, ցանցային հասարակության առանձնահատկությունները, հետխորհրդային երկրների մոդեռնացման գործող մոդելները, ցեղասպանության, զանգվածային բռնության ու պատերազմի հիմնահարցերը եւ արդիական այլ կարեւոր հիմնախնդիրներ:

Գիտաժողովի կոմիտեի անդամներն են ԵՊՀ ռեկտոր Ա. Սիմոնյանը, Առաջատար ուսումնասիրությունների շվեդական կոլեգիումի նախագահ եւ Սոցիոլոգիայի միջազգային ինստիտուտի նախագահ Բյոռն Վիտրոկը, Նյու Յորքի համալսարանի ներկայացուցիչ Քրեյգ Քելհոունը, Կենտրոնական եվրոպական համալսարանից Եհուդա Էլկանան, ԵՊՀ սոցիոլոգիայի ամբիոնի պրոֆեսոր Լյուդմիլա Հարությունյանը, Միջազգային սոցիոլոգիական ասոցիացիայի փոխնախագահ Հանս Յոասը, Ցյուրիխի համալսարանի ներկայացուցիչ եւ Սոցիալական մարդաբանության եվրոպական ասոցիացիայի նախագահ Շալինի Ռանդերիան, ինչպես նաեւ Օքսֆորդի եւ Սինգապուրի Կառավարման համալսարանների ներկայացուցիչ, Սոցիոլոգիայի միջազգային ինստիտուտի գլխավոր քարտուղար եւ Սոցիոլոգիայի եվրոպական ակադեմիայի նախագահ Փիթեր Հեդստրյոմը:

Կոնգրեսին մասնակցելու են սոցիալական գիտությունների ականավոր ներկայացուցիչներ Իմանուել Վալերստայնը, Միշել Վիվյորկան, Էդվարդ Թիրյաքյանը, Լեւ Գուդկովը, Միխայիլ Գորշկովը եւ վաստակաշատ այլ սոցիոլոգներ: Հայաստան են ժամանելու աշխարհում հայտնի հայազգի սոցիոլոգներ ու գիտնականներ. ընդ որում՝ նրանցից ոմանք առաջին անգամ են լինելու հայրենիքում:

Կոնգրեսի աշխատանքներին ընդգրկված են 89 համալսարաններ եւ գիտահետազոտական կենտրոններ ավելի քան 50 երկրներից: Կոնգրեսը ներառելու է հարյուրից ավելի պլենար, հատուկ, թեմատիկ նիստեր եւ կլոր սեղաններ:

Կոնգրեսի կազմակերպման եւ անցկացման մասին ավելի մանրամասն տեղեկություններ կարելի է ստանալ Սոցիոլոգների միջազգային ինստիտուտի պաշտոնական կայքէջից՝ «www.iisoc.org»:

AZG NEW 4.QXD 6/9/2009 8:14 PM Page 1



ԱԶԳ

## Ընտրություններ

# Լիբանանի երեսփոխանական ընտրութիւններն ու լիբանանահայ գաղութը

Երկու տարի սպասուած երեսփոխանական ընտրութիւնները վերջապէս տեղի ունեցան անցեալ շաբաթավերջին՝ կիրակի, յունիս 7-ին: Լիբանանի բոլոր նահանգներուն մէջ ապրող լիբանանցիները այդ օրը տուին իրենց ձայնը: Հանրապետութեան նախագահ զօրավար Միշէլ Սուլէյման ամիսներ առաջ յայտարարած էր, որ ընտրութիւնները պիտի ըլլան ազատ ու թափանցիկ:

Երկու հզօր հոսանքներու պայքարն էր, որ կը մղուէր այս ընտրութիւններու միջոցով. մէկ կողմէն՝ Սաադ Հարիրիի գլխաւորած «Մարտ 14» համախմբումը, որ առաւելաբար արեւմտամէտ քաղաքականութեան մը առաջադրանքներով հրապարակ կու գայ, եւ միւս կողմէն՝ «Հըզբոլլահի» կուսակցութեան գլխաւորած «Մարտ 8» համախմբումը, որ ունի առաւելաբար Իրանի ու Սուրիոյ նեցուկը:

Այս երկու համախմբումներուն մաս կը կազմէին մեր քաղաքական երեք կազմակերպութիւնները: Այսպէս. հայկական կուսակցութիւններէն ՌԱԿ-ն ու ՍԴՀԿ-ն՝ «Մարտ 14»-ի քաղաքական արեւելումին առաւելաբար կողմնակից ըլլալով, գործակցեցան «Մուսթաքպալ» հոսանքի, «Լիբանանեան ուժերու» եւ «Փաղանգաւոր» կուսակցութեան հետ, մինչդեռ ՀՅԴ-ն՝ «Մարտ 8»-ի ուժերուն կողմնակից, գործակցեցաւ «Հըզբոլլահ» կուսակցութեան, «Ամալ» շարժումի եւ զօրավար Միշէլ Աունի կուսակցութեան հետ:

Մեծագումար նիւթական յատկացումներ եղան այս զոյգ համախմբումներուն. մէկ կողմէն Իրանը իրեն հաւատարիմ «Հըզբոլլահ»-ի միջոցով եւ միւս կողմէն՝ Սէուտական Արաբիան՝ Հարիրիի միջոցով: Ասոնք բնական երեւոյթներ են ընտրական պայքարներու ընթացքին, այն տարբերութեամբ, որ ընտրարշաւի տեւողութեան երկրի քաղաքացին է, որ իր նիւթական մասնակցութիւնը կը բերէ տուեալ կուսակցութեան մը կամ համախմբումի մը, մինչդեռ Լիբանանի պարագային օտար երկիրներն են, որ առատաձեռն կերպով դրամ կը նետեն լիբանանեան քաղաքական կրկէսէն ներս:

Լիբանանահայոց ձայնը որոշիչ դեր մը պիտի ունենար այս ընտրութիւններուն: Ասիկա յայտնի էր ընտրապայքարի առաջին օրէն: Արդէն «Նիւ Եորք Թայմզ»-ի սիւնակագիրը՝ Ռոբըրթ Ուըրթի, ընտրութիւններու նախօրեակին, նոյն օրաթերթին մայիս 26-ի թիւով կը գրէր, որ լիբանանահայ համայնքը պիտի ունենայ որոշիչ ձայն մը ընտրութիւններուն մէջ: Ու այդ մենաշնորհումը կու տար Հայ Յեղափոխական Դաշնակցութեան:

Ամիսներ առաջ Դաշնակցութեան Լիբանանի Կեդրոնական կոմիտէն աշխատանքի լծուեցաւ արդարացնելու իր վրայ դրուած յոյսերը Բեյրութի ընտրաշրջաններէն ներս: Ան աշխատեցաւ քանի մը ճակատներու վրայ: Այսպէս՝ ապահովելու համար Լիբանանէն արտագաղթած հայերու ձայները, Ամերիկա ուղարկեց իր երեսփոխանը կազմակերպելու համար նախկին լիբանանահայերու մասնակցութիւնը ընտրութիւններուն: Հայեր, որոնք Լիբանանը ձգելէն ի վեր տասնամեակներ ամբողջ չէին այցելած իրենց ծննդավայրը, օգտուելով ձրի օդանաւային երթուդարձի տոմսակներու եւ կեցութեան ծախսերէն, արձանագրուեցան ՀՅԴ-ի ակումբներէն թէ եկեղեցիներէն ներս: Այս առթիւ Լոս Անջելըսի Ֆերահեան վարժարանի տնօրէն Ժան Քոսակեան յայտարարեց. «Արտերկրի լիբանանահայութեան մասնակցութիւնը համահայկական առումով ցոյց կու տայ համաշխարհային նոր համակարգի մը իրողութիւնը, որ նոյնինքն արդէն մեծ յաղթանակ է»: Առանց նշելու սակայն, որ ասիկա երբեք չի համապատասխաներ քաղաքացիական այն իրաւունքին, երբ քաղաքացին լքած է իր հայրենիքը ու երբեք չէ այցելած հոն:

Այս իրողութիւնը նաեւ կը սեւեռէ ուշադրութիւնը Մ. Նահանգներու զանազան ապահովական եւ ներքին սպասարկութիւններուն հայութեան վրայ, երբ այս անգամ իր երկրի՝ Միացեալ Նահանգներու քաղաքացին կ՚երթայ Լիբանան տալու իր ձայնը հրանամէտ «Հըզբոլլահ»-ի գլխաւորած համախմբումին: Փաստօրէն Դաշնակցութիւնը արկածախնդրական քայլ մըն էր, զոր առած կ՚ըլլար ի վնաս ամերիկահայ մեր համայնքի անդորր կեանքին:

Երկրորդ, ՀՅԴ-ն Լիբանանի մէջ իր տրամադրութեան տակ եղող բոլոր գործօնները կը դնէր իր սպասարկութեան տակ: Այսպէս, Անթիլիասի Կիլիկեան աթոռը, որ հեռու մնալու էր այս ընտրական պայքարէն, սկսաւ մաս կազմել ընտրարշաւին, անգամ մը եւս կորսնցնելով իր անկախութիւնը ներկայանալու իր թեմերէն ներս որպէս հոգեւոր, եւ ոչ թէ քաղաքական կեդրոն:

Միւս կողմէն, ՀՅԴ-ն յառաջ բերաւ «Հայկական երեսփոխանական բլոք» մը, որ փաստօրէն իր գլխաւորած ճակատը պիտի ըլլար: Հրաւէր ուղղեց նախ միւս երկու կուսակցութիւններուն՝ ՍՀԴԿ եւ ՌԱԿ, որպէսզի մաս կազմէին այդ բլոքին: Բարեբախտաբար մեր զոյգ կուսակցութիւնները կանուխէն անդրադարձան Դաշնակցութեան քաղաքական խաղին եւ մերժեցին առաջին իսկ պահէն մաս կազմելու այդ ճակատին: Դաշնակցութիւնը անպայմանօրէն կ՚ուզէր Լիբանանի ժողովուրդին ներկայանալ համայն հայութեան անունով: Ասիկա կարեւոր էր նաեւ ապահովելու իր դիրքերը Հայաստանի պետական շրջանակներու մօտ, որպէս սփիւռքահայութեան լիազօր ներկայացուցիչ:

Դժբախտաբար այդ խաղին զոհը դարձաւ Արթիւր Նազարեան, ՀԲԸ Միութեան բարեհամբաւ Նազարեան տոհմին զաւակը: Դաշնակցութիւնը խորհեցաւ, թէ պրն Արթիւր Նազարեանը բերելով սիրաշահած պիտի ըլլար ՀԲԸՄ-ի մեծ ընտանիքը: Բարեբախտաբար միութեան ղեկավարութիւնը ինքզինք անջատեց անկէ:

Նոյն խաղը ՀՅԴ-ն այս անգամ խաղալ ուզեց ՌԱԿ-ի Կեդրոնական վարչութեան հերթապահին՝ Մայք Խարապետեանին միջնորդութեանը ապաւինելով: Ան միամտաբար կամ այլապէս տարբեր շահերէ առաջնորդուելով ու բոլորիս կողմէ անհասկանալի պատճառներով գործակցութեան ձեռք երկարեց ՀՅԴ-ին, որպէսզի Լիբանանի մեր շրջանակը մաս կազմէր Դաշնակցութեան ղեկավարած այդ բլոքին: Բարեբախտաբար, ՌԱԿ Լիբանանի շրջանային վարչութիւնը, գլխաւորութեամբ իր ատենապետին՝ տոքթ. Աւետիս Տաքէսեանին, արթնօրէն ընթացք չտուաւ Խարապետեանի հրահանգին ու շարունակեց մաս կազմել «Մարտ 14» համախմբումին: Այս անտեղի միջամտութեանց պատճառով երկու շրջան ՌԱԿ-ի երեսփոխանական աթոռը գրաւած Յակոբ Գասարճեան ստիպուած եղաւ իր տեղը զիջիլ ՌԱԿ-ի նոր ներկայացուցիչին՝ Ժան Օղասափեանին: Սակայն, միաժամանակ, ընկեր Յ. Գասարճեան շարունակեց ղեկավարել երեսփոխանական ընտրապայքարը բովանդակ տեւողութեան, պահելով կուսակցական կարգապահութիւն:

Հետեւելով հանրահաւաքներու ընթացքին հնչած խօսքերուն, տխրութեամբ կ՚արձանագրենք, որ Դաշնակցութեան պատասխանատուները եւ ի մասնաւորի Յակոբ Բագրատունին անցեալ դարու 30-ական թուականներու եւ Ցուրտ պատերազմի օրերու ոգիով լեցուն բառամթերքով մը կ՚ունենար իր ելոյթները հնչակեաններու եւ ռամկավարներուն հասցէին: Ամբոխավարութիւն մը, զոր պիտի որակենք փողոցային, երբ մէկ կողմէ Դաշնակցութիւնը իր ուզած պահուն կը յայտարարէ «մէկ ազգ, մէկ հայրենիք», իսկ միւս կողմէ, յատկապէս երբ ինք կը զրկուի առաջնորդութեան դերը ստանձնելէ, արդէն կը վերադառնայ իր անցեալի տխուր գործելակերպին:

Եւ ահա արդիւնքները արեւու լոյսի նման պայծառ կը հրապարակուին ընտրութեան յաջորդ օրերուն:

Բեյրութի Բ. ընտրաշրջանէն Դոհայի համաձայնությամբ առանց ընտրապայքարի ընտրուեցան Սեպուհ Գալփաքեան (ՍԴՀԿ) եւ Արթիւր Նազարեան:

Բեյրութի Ա. ընտրաշրջանէն ընտրուեցան «Մարտ 14» համախմբումի ներկայացուցիչներ Ժան Օղասափեան (ՌԱԿ) եւ Հայ կաթողիկէ համայնքէն Սերժ Թուրսարգիսեան:

Մեթնէն (Լեռնալիբանան) առանց ընտրապայքարի ընտրուեցաւ Յակոբ Բագրատունին (ՀՅԴ):

Զահլէէն՝ «Մարտ 14» համախմբումի ներկայացուցիչ Շանթ Չինչինեանը:

Այսպիսով հայ երեսփոխաններէն 4-ը «Մարտ 14» համախմբումէն եւ 2-ը «Հըզբոլլահի» գլխաւորած ընդդիմութենէն են:

Ու այս անգամ մենք է, որ կ՚արձանագրենք անցեալ շաբթուան ՀՅԴ «Ազդակ» օրաթերթի վերնագիրներն ու լոզունգները.

«7 յունիսին լիբանանահայութիւնը իր քուէներով տիրացաւ իր իրաւունքներուն», կամ՝ «Մեր բոլոր քաղաքացիները առաւելագոյն թիւով մասնակցեցան, քանի որ մեր պայքարը իրենց համար է, զօրաւոր Լիբանանի մէջ ուժեղ ներկայութիւն ունենալու համար է», ու դեռ՝ «Մենք այսօր պիտի քուէարկենք ապագայ սերունդին համար, որպէսզի անիկա ազատ ու ինքնիշխան Լիբանանի մէջ ապրի»:

**ՅԱԿՈԲ ՎԱՐԴԻՎԱՌԵԱՆ**
**Նիւ Եորք**

## ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՐԳԻԾԱՆՔ

# Մեր միակ ճշմարտությունը

Մեկ-մեկ որ չեն ասում, թե ճշմարտությունը միայն մեկն է լինում, քիչ է մնում մեջտեղից պայթեմ. էդ ո՞նց է, որ մեկն է լինում: Սխալ ուղու վրա եք, սիրելիներս: Ինչքան մարդ, այնքան ճշմարտություն: Դեռ ավելին՝ ինչքան կուսակցություն, այնքան ճշմարտություն, ինչքան ազգ, ռասա, աշխարհամաս, մոլորակ, գալակտիկա, էլ չգիտեմ ինչ, ամեն մեկը դրանցից իր ճշմարտությունն ունի: Բերեմ հասարակ օրինակ. ասենք, եվրոպացին գալիս է մեզ նման եվրասիացու մոտ, հարցնում՝

- Ի՞նչ ես հասկանում ընտրություն ասելով:

Եվրասիացին կասի.

- Հաղթանակի հասնելու համար ոչ մի բանի առջեւ չկանգնելու, միջոցների միջեւ խտրություն չդնելու, ձեռդ ընկածը քոռուփուչ չանելու, ազգականներիդ, մերձավորներիդ, ենթականերիդ հավաքագրելու, հանուն վերադասի հորդ, մորդ, սիրածիդ, հեռուդ ու հեռակնոջդ ազիզ արեւներով երդվելու պատրաստակամություն:

- Վե՞րջ, այդքան բա՞ն,- կասի եվրոպացին:

Եվրասիացին կասի.

-Մնացածն արդեն հրապարակման ենթակա չէ, կոմերցիոն գաղտնիք է, տղա ես՝ գլխի ընկի:

Եվրոպացին մտքի մեջ կասի. «Սրանք կամ շատ պարզամիտ եւ հետամնաց մարդիկ են, աբորիգեններին տվել անցել են, կամ էլ շատ քոքված են, մեզ վրա խաբար չկա: Սրանց պատկերացրած ընտրությունն ու հարսանիքի կամ բանակի քեֆը իրար նման են: Միասին կուտեն, կխմեն, հետո կելնեն, իրար վրա կրակ կբացեն»:



- Լավ, որ այդպես է, բա ինչո՞ւ ընտրությունից հետո ձեր մեջ անպայման խռովություն ու գժտություններ են լինում,- կշարունակի եվրոպացին:

- Դա նրանից է,- ասում են մերոնք,- որ ընտրության ժամանակ հարսնացուն մեկին է տալիս, փեսացուն՝ մյուսին, քեռին կուսակցության մի ցուցակով է անցնում, քեռակինը՝ մի ուրիշ, նայած ում ինչքան եւ ինչպես են տալիս:

- Նման բաներ երբեմն մեզ մոտ էլ են լինում, բայց մենք դա անում ենք անաղմուկ, սուսուփուս:

- Մեզ մոտ դա չի ստացվում, մերն ուրիշ է,- ասում է եվրասիացին: Հետո զգում է, որ եվրոպացին հարցասեր ու հետաքրքրասեր է, որոշում է սրա աչքերը բացելու համար մի փոքրիկ դասախոսություն կարդալ:- Ենթադրենք՝ շեֆդ ասում է, որ պիտի սրան ընտրես, ոչ թե էն մյուսին, եթե փորձես հակառակվել եւ ուրիշին ընտրել, քթիցդ կգա: Դու դա չես անի, եթե խաբես, դու քեզ կխաբես, որովհետեւ ուրիշին ընտրելու դեպքում էդ ընտրված ուրիշը կգա, իր մարդուն քո շեֆի տեղը կբերի, նա էլ իր հերթին քո տեղին ուրիշ մարդ կբերի: Այստեղից էլ պետք է եզրակացնել, որ մենք ամեն մեկս մեր տեղի համար ենք ընտրում: Մեզ համար ընտրությունը կենաց-մահու կռիվ է:

- Բա մյուսները, ովքեր շեֆեր չունեն իրենց գլխին, ո՞նց է լինում նրանց հարցը,- կհարցնի եվրոպացին:

- Իր գլխին շեֆ միայն Աստված չունի:

- Էս ինչ խավարի մեջ եք, եղբայր:

- Դրա համար էլ մի բան կա, որը խավարի մեջ էլ լույս կտա, ինչ է, ձեր Եվրոպայում դրանից չկա՞:

- Չէ, չկա:

- Դե որ չկա, մեր գլխին լոլո մի կարդա, թող մենք մեր յուղով տապակվենք:

- Բայց քո շեֆը ո՞նց է իմանում, թե ում ես ձայն տվել, չէ՞ որ քվեարկությունը փակ գաղտնի է,- եվրոպացին կրկին իրենն է առաջ քշում:

- Նորից կրկնեմ, չհասկացաք, երեւում է, իմ ու իմ շեֆի շահերը համընկնում են, նրա ուզած մարդը ընտրվեց՝ ինքը կմնա, ինքը մնաց՝ ես էլ կմնամ: Իսկ թե ինչպես նա կիմանա իմ ընտրելն ու չընտրելը, դա արդեն տեխնիկայի հարց է, իսկի չլինի՞ արբանյակից լուսանկարելով կիմանա, թե ով ում է ընտրել: Մի՞թե չես հասկանում, որ մեր ու ձեր միջեւ սարեր ու ձորեր կան: Օրինակ, եթե ձեզ մոտ կարուսելը մանուկների համար է, մեզ մոտ՝ մեծերի: Եթե ձեզ մոտ դիտորդներն ընտրողներին են նայում, մեզ մոտ ընտրվողներն են դիտորդներին նայում: Եթե ձեզ մոտ հանձնաժողովի անդամները չեզոք մարդիկ են, մեզ մոտ՝ ինքնահրկիզման եւ խարակիրիի պատրաստ կուսակցական գործի նվիրյալներ: Հիմա հասկացա՞ք:

- Ուրեմն ձեր երկրում ոչ մի բան չի փոխվի. ով ընտրվել է, ընտրված էլ կմնա:

- Բայց ինչո՞ւ պիտի փոխվի , փոփոխություննե՞ր եք ուզում, գնացեք մեր հարեւան Ադրբեջան: Իսկ գիտե՞ք ինչ է կատարվում այնտեղ. հորից իշխանությունը փոխանցվում է որդուն, սա էլ, եթե իշխելուց հոգնի, բեզարի, կնոջը կտա, մինչեւ որդին մեծանա, հոր նման բոյ քաշի: Սահմանադրություն ասածն էլ էդ երկրում նավթավառի է նման, երբ օգտագործման ժամկետը լրանում է, կրկին նավթով են լցնում: Այնպես որ, սիրելի եվրոպացի, մեզ մի ստիպի, որ մեր հակառակորդից մի քայլ հետ մնանք:

- Լավ, իսկ ի՞նչ կասեք՝ Ղարաբաղն ո՞ւմն է, Հայաստանի՞նը, թե՞ Ադրբեջանինը:

- Ո՛չ Հայաստանը, ո՛չ էլ Ադրբեջանինը: Ղարաբաղը ղարաբաղցիներինն է:

Եվրոպացին Հայաստանից գլուխ չհանելով՝ գնում է Ադրբեջանի տուն, նույն հարցը փորձում նրան տալ: Այդ միջոցին Ադրբեջանը մի վայնասուն, հարայհրոց էր գցել. «Էս ագրեսոր Հայաստանը մտել է իմ երկիր, տարածքիս 20 տոկոսը զավթել, իրենով է արել, վույ աման, բաբամ, մանօլեմ, հասեք»:

Եվրոպան երբ տեսնում է, թե ինչպես հսկայամարմին էս Ադրբեջանն ընկել է փոքրամարմին Հայաստանի տակը եւ բայղուշի պես լաց է լինում, սիրտը ճմլվում, կուչ է գալիս, մոտենում Ադրբեջանին, ոտի է հանում, շորերը թափ տալիս, հետո նկատում է, որ սրա տնից լավ էլ նավթահոտ է գալիս, մտքերի մեջ է ընկնում ու ինքն իրեն ասում. «Արի սրան մի քիչ սիրտ տանք, գոտեպնդվի, սրա նավթը տանենք մեր երկիր, հետո մի բան կլինի՝ կամ էշը կսատկի, կամ իշատերը, Աստված ողորմած է»:

Հիմա Եվրոպային շատ չի հետաքրքրում՝ Ղարաբաղը ումն է, ումը չէ, կարեւորը Ադրբեջանը եւ Հայաստանը իրար հետ կռվի չբռնվեն, նավթի ճանապարհի վրա քար չգցեն:

Տեսա՞ք այս փոքրիկ հարցերի մեջ քանի ճշմարտություններ կային: Ամեն մեկն իր ճշմարտությունն ուներ՝ անբեկանելի եւ բացարձակ, անառարկելի եւ մշտնջենական:

**ՄՆԱՑԱԿԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**
**Հրազդան**

AZG NEW 5.QXD 6/9/2009 8:53 PM Page 1



# Օբաման դարձյալ խախտում է խոստումը

*«Մ. Նահանգների նախագահ Բարաք Օբաման շարունակում է հուսախաբ անել ամերիկահայերին», գրում է «Կալիֆոռնիա կուրիեր» թերթի հրատարակիչ եւ խմբագիր Հարութ Սասունյանը՝ անդրադառնալով Ֆիլիպ Գորդոնի նշանակմանը պետքարտուղարի օգնական եվրոպական եւ եվրասիական խնդիրների գծով: Ստորեւ թարգմանաբար ներկայացվող հոդվածում նա հետաքրքրական մանրամասներ է ներկայացնում նրա մասին:*

Դոկտ. Գորդոնը թուրքամետ մի շարք գրքերի եւ հոդվածների հեղինակ է: Նախկինում եղել է մասամբ թուրքական միջոցներով ֆինանսավորված «Բրուքինգզ ուղեղների կենտրոն հաստատության» տնօրենը: Քանիցս ընդդիմացել է Հայոց ցեղասպանության ճանաչմանը Կոնգրեսում եւ արդարացնելով Կիպրոսում թուրքական բանակի գործողությունները՝ խստորեն քննադատել է երկրի առաջնորդներին: Քլինթոնի վարչակազմում ծառայել է Ազգային անվտանգության խորհրդում որպես եվրոպական գործերի տնօրեն: Նախագահական վերջին ընտրապայքարի օրերին գլխավորել է Օբամայի արտաքին քաղաքականության խորհրդատուների խմբի եվրոպական բաժինը:

Մարտ ամսին իր նշանակման հաստատմանը նվիրված Սենատի արտաքին հարաբերությունների կոմիտեում կայացած լսումների ժամանակ նրան հայկական եւ կիպրական խնդիրների վերաբերյալ հարցերով տանջել էր դեմոկրատ Ռոբերտ Մենենդեսը: Մի քանի սենատորներ նշել էին, որ Գորդոնի պատասխանները հակասում են Օբամայի նախընտրական խոստումներին: Այդ ժամանակ նրանք (սենատորներ) չգիտեին, որ ընդամենը մի քանի շաբաթ անց ինքը՝ նախագահն էլ այդ խնդիրների վերաբերյալ իր խոստումները չէր պահելու:

Սենատոր Մենենդեսն ավելի քան 20 հարց ուղղեց նրան, ակնկալելով գրավոր պատասխաններ հետագայում: Սենատոր Ջոն Էնզայնը (հանրապետական Նեւադայից) ապրիլի 7-ին մեղադրական մի նամակ էր հղել նրան՝ նշելով, որ լսումների ժամանակ «ողբերգություն» բառն էր օգտագործել հայերի ցեղասպանության առնչությամբ: Նա ցանկացել էր իմանալ, թե արդյոք ինքը նախագահի, փոխնախագահ Բայդենի եւ պետքարտուղար Քլինթոնի (որոնք բոլորն էլ ճանաչել են հայերի ցեղասպանությունը) կարծիքներին դեմ չի՞ գնում: Ավելին, անդրադառնալով Հայաստանում ԱՄՆ-ի դեսպան Ջոն Էվանսին վաղաժամկետ հետ կանչելուն, նա հարցրել էր, թե արդյոք չէ՞ր խրախուսելու դեսպաններին կամ օտար երկրներում ծառայող անձանց՝ օգտագործելու «հայերի ցեղասպանություն» բառեզրը:



*Ֆիլիպ Գորդոն*

Չբավարարվելով Գորդոնի պատասխաններով, սենատոր Էնզայնը արգելք էր հանդիսացել նրա թեկնածությանը, բայց, ի զարմանս բոլորի, հետագայում կանաչ ճանապարհ էր բացել նրա առաջ՝ կողմ քվեարկելով հաստատմանը:

Սենատոր Մենենդեսի 28 հարցերին գրավոր պատասխանելիս Գորդոնն օգտագործել էր բառարաններում եղած գրեթե բոլոր բառերը, բացի «ցեղասպանություն» բառեզրից: Նրա պատասխանների մեծ մասը «խուսափողական» կարելի էր բնութագրել: Միայն մեկ պատասխան, կարելի է ասել, հասկանալի էր:

Սենատոր Մենենդեսի հարցին, թե «Ա աշխարհամարտի ժամանակ ո՞վ էր պատասխանատու 1,5 միլիոն հայերի կոտորածների համար», Ֆիլիպ Գորդոնը պատասխանել էր. «Այս վարչակազմը, ինչպես իր նախորդը, չի ժխտում փաստերը: Մեկուկես միլիոն հայեր կոտորվեցին, սովամահ եղան կամ տեղահանվեցին Օսմանյան կայսրության զինվորների եւ քաղաքացիական պաշտոնյաների կողմից: Նրանցից ոմանք մահվան դատապարտվեցին այդ ոճրագործությունների համար: Միացյալ Նահանգները սգում է պատմության այդ սարսափելի էջերը եւ համոզված է, որ դրանք դեռեւս մնում են որպես ցավի ու կսկիծի ակունքներ Հայաստանի ժողովրդի, հայկական արմատներ ունեցողների եւ բոլոր նրանց համար, ովքեր հավատում են մարդկային արժեքներին եւ արժանապատվությանը»: Գրելով, որ «Օսմանյան կայսրության զինվորների եւ պաշտոնյաների կողմից» էր իրականացված այդ բոլորը, նա փաստորեն ընդունում էր, որ կատարվածը պետության հովանավորությունն էր վայելում: Բացի դրանից, Գորդոնը նաեւ որոշ տվյալներ է բացահայտել նախկինում իր ղեկավարած «Բրուքինգզ» հաստատության վերաբերյալ:

2006-2008 թվերին այդ հաստատությունը ընդհանուր առմամբ 700 հազար ամերիկյան դոլար է ստացել հետեւյալ թուրքական աղբյուրներից:

«Արդյունաբերողների եւ գործարարների թուրքական ասոցիացիայից»՝ 200 հազար դոլար:

«Սաբանջի համալսարանից»՝ 190 հազար դոլար:

«Էքսիոգյուլլարի շինարարական գրուպից»՝ 150 հազար դոլար:

«Դողան Յային հոլդինգից» (ԶԼՄ-ների զվարճանքի ընկերություն)՝ 100 հազար դոլար:

«Նուրոլ» շինարարական եւ առեւտրի ընկերությունից՝ 30 հազար դոլար:

«Հեդեֆ-Ալյանս» հոլդինգից (դեղագործական ընկերություն)՝ 30 հազար դոլար:

Ֆիլիպ Գորդոնի նման թուրքամետ պաշտոնյաները մեծ թիվ են կազմում ամերիկյան կառավարության անդամների շարքում: Նրանց մի մասը անցյալի սառը պատերազմի շրջանի մնացուկներ են: Մյուսները՝ անձնական շահերից դրդված, որոշ ժամանակ ծառայում են կառավարությունում, հետո կա՛մ տեղավորվում թուրքերի կողմից ֆինանսավորվող «ուղեղների կենտրոններում», կա՛մ էլ դառնում հօգուտ Թուրքիայի քարոզիչներ:

Ամերիկահայերը շարունակելու են մեծ դժվարություններ ունենալ իրենց քաղաքական ակնկալիքներում անկախ այն բանից, թե ո՞ր կուսակցությունն է իշխանության գլխին, մինչեւ իրենք էլ իրենց հերթին քաղաքական դերակատարություն չունենան գործադիր մարմիններում, «ուղեղների կենտրոններում» եւ զանգվածային լրատվամիջոցներում:

**Թարգմ.՝ Հ. ԾՈՒԼԻԿՅԱՆ**

ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

# Հայերս՝ ներշնչանքի աղբյուր ադրբեջանական լրատվամիջոցների համար

**Ամեն անգամ, երբ ծանոթանում ես ադրբեջանական լրատվամիջոցների պարունակությանը, այն տպավորությունն ես ստանում, որ, ժողովրդական լեզվով ասած, առանց Հայաստանի դրանք կյանք չունեն: Մանրակրկիտ պեղվում են մեր երկրի կյանքի բոլոր կողմերը, տրվում են դրանց ազերածին մեկնաբանությունները, արվում են մեզ համար կործանիչ հետեւություններ եւ այլն: Եթե ուզում եք իմանալ, օրինակ, ովքե՞ր են մեզ այդ օրերին փնովել, մի չարչարվեք, ծանոթացեք նրանց հրատապ նյութերին: Պարտված պետության սինդրո՞մ: Երեւի: Ի դեպ, այդօրինակ հրապարակումներ ֆոնի վրա հատկապես հայոց մամուլը առավել քան պատկառելի է:**

**Հետաքրքրության համար բացենք ազերական ինտերնետային մի հրատարակություն: Բնավ էլ կարեւոր չեն ո՛չ դրա անունը, ո՛չ օրը, ո՛չ էլ ժամը: Գլխավոր նորությունն այն է, որ հոլիվուդյան աստղեր Անջելինա Ջոլին եւ Բրեդ Փիթը ուզում են հայ երեխայի որդեգրել, որովհետեւ օրինական ձեւակերպումը Հայաստանում... ամենահեշտերից մեկն է աշխարհում, ինչքան էլ հակառակը պնդի երկրի ղեկավարությունը: Հայերը համոզված են, որ իրենց երեխաներն ամենախելոքն են ու ամենագեղեցիկը: Մինչդեռ երբ մանուկը մեծանա եւ լայն բացի բերանը, բարձրաձայն կպահանջի ճանաչել ցեղասպանությունը:**

**Համաշխարհային ոլորտի նյութերն ակունք են առնում աշխարհի երկու ազդեցիկ ու անբաժան պետությունների՝ Թուրքիայի եւ Ազերստանի փոխհարաբերություններից: Ահա եւ առաջինի ղեկավարությունը ի սեր երկրորդի ամպագոռգոռ հայտարարել է, որ առանց Ղարաբաղի խնդրի լուծման հայերն իրենց ծոծրակը կտեսնեն, բայց ոչ բաց սահմանը: Մոտավորապես այսպես: Իսկ ահա «օկուպանտ» երկրի ղեկավարը խնդրել է (զարմանալիորեն՝ ոչ լկտիաբար) այդ իրավասուներին քիթը չխոթել Արցախի գործերի մեջ: Պարզվում է, իսկական թուրքերը խիստ դժգոհ են նաեւ ԵԱՀԿ Մինսկի խմբի միջնորդական գործունեությունից, որը հանդուրժում է Ադրբեջանի 17-ամյա օկուպացումը: Այսինքն, երկու նախագահների հերթական հանդիպումը արդյունավետ կլինի միայն այն դեպքում, եթե Հայաստանը գնա միակողմանի զիջումների:**

**Ազերիայի խորհրդարանի իգական սեռի փոխնախագահը զայրույթ է հայտնել, որ Հայաստանի խորհրդարանի ղեկավարն անբավականություն է հայտնել ԱՊՀ միջխորհրդարանական վեհաժողովի բացման ժամանակ նրա իսկ ունեցած դատապարտելի ելույթի առնչությամբ: Ինչ ցինիզմ, քիչ չէ՝ օկուպանտ են, դեռ նեղանում էլ են:**

**Քամիների քաղաքի վերլուծաբաններից մեկն արձանագրում է, թե միջազգային փորձագետներն անընդհատ զարմանում են ազերիների ազնվությունից: Ոնց չզարմանաս, քիչ չէ՝ կորցրել են իրենց պատմական տարածքի 20 տոկոսը, բայց դեռ պատրաստ են մեծ ներդրումներ կատարել... Լեռնային Ղարաբաղում՝ անմոռաց խանությունում:**

**Ուկրաինայում ու Ռումինիայում անհագ հետաքրքրությամբ ծանոթանում են տեղի ազգային համայնքների ուժերով հրատարակված՝ ազերիների հազարամյա պատմությանը (ի տարբերություն եկվոր թե քոչվոր հայերի), մի երկրի, որի տարածքում հայտնաբերվել է երեւի աշխարհի հնագույն մարդը (պարզ չէ, նա թլպատվա՞ծ է եղել, թե՞ ոչ):**

**Որպես մուսուլմանական քաղաքակրթությանը պատկանելու հպարտության արտացոլում հիշատակվում են Իսլամական կոնֆերանս կազմակերպության Դամասկոսում ընդունած երեք բանաձեւերը, որոնցով խորխտաբար դատապարտվում են հայ ագրեսորների վարքագիծը, օկուպացված տարածքներում իսլամական մշակույթի ու պատմության հուշարձանների բարբարոս ոչնչացումը:**

**Մեզ փնովողների մասին: «Հայտնի» լրագրողուհի Լարիսա Լատինինան արհամարհանքով հայտարարել է, թե հայերը, Ռուսաստանից ստանալով կես միլիարդ դոլարի վարկ, անմիջապես հրաժարվել են մասնակցել Վրաստանում անցկացվող ՆԱՏՕ-ի զորավարժություններին: Մեզ դաշնակից են դառնում երկրներ, որոնք առանց փողի ոչինչ չեն անում: Լատինինան հասկացրել է, որ ճիշտ կլիներ, եթե հայերն ու Մոսկվայի մյուս խնամառուները վարվեին Լուկաշենկոյի պես՝ խոստացավ վարկի դիմաց ճանաչել Աբխազիան ու Հարավային Օսիան, բայց երբ գումարն ստացավ, մոռացավ ամեն ինչ:**

**Շարունակե՞նք: Իմաստ չունի, քանզի ազերիների հակահայկական երեւակայությունն անսպառ է: Շատ ենք ոգեշնչում մենք նրանց:**

**ՌՈՒԲԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**
**Մոսկվա**

# Վանկուվերը ճանաչվեց ամենահարմարավետ քաղաք

**Կանադայի Վանկուվեր քաղաքը հերթական անգամ բնակության համար աշխարհի ամենահարմարավետ քաղաքն է ճանաչվել: Այդ են վկայում Economist Intelligence Unit (EIU) ընկերության հետազոտության արդյունքները, որոնք հրապարակվել են բրիտանական The Economist հանդեսում:**

**EIU-ն ամեն տարի կազմում է աշխարհի առավել հարմարավետ քաղաքների վարկանիշները, հիմք ընդունելով բնակչության կենսամակարդակը, սոցիալական կայունությունը, ապահովությունը, կլիմայական պայմանները, շրջակա միջավայրի, ենթակառույցի, առողջապահության եւ սպասարկումների մատչելիությունը:**

**Վանկուվերը EIU-ի փորձագետներից ստացել է 98 միավոր (հնարավոր 100-ից): Երկրորդ տեղում է Ավստրիայի մայրաքաղաք Վիեննան, երրորդում՝ Մելբուռնը (Ավստրալիա): Լավագույնների տասնյակի մեջ են մտել նաեւ Տորոնտոն, Պերտը, Կալգարին, Հելսինկին, Ժնեւը, Ցյուրիխը եւ Սիդնեյը:**



**Ասիայում առավել հարմարավետ քաղաքներ են ճանաչվել Օսական (13-րդ տեղ) եւ Տոկիոն (19), Հոնկոնգը (39), Սինգապուրը (54): Պեկինը 76-րդ տեղում է, Թաիլանդի մայրաքաղաք Բանգկոկը՝ 100-րդ:**

**Վաշինգտոնը զբաղեցնում է 35-րդ, Լոս Անջելեսը՝ 58-րդ տեղը: Եվրոպայում ամենավատ ցուցանիշն ունի Աթենքը (63 տեղ, 81,2 միավոր):**

**Ամենաանհաջող քաղաքներն են Ալժիրը, Բանգլադեշի մայրաքաղաք Դաքան եւ Զիմբաբվեի մայրաքաղաք Հարարեն: Վերջինս ստացել է ընդամենը 37,5 միավոր:**

# Ադրբեջանը 15 էշ է ներմուծել եղբայրական Թուրքիայից

## *Յուրաքանչյուրի դիմաց պետբյուջեից վճարելով 18 հազար 200 ԱՄՆ դոլար*

Անցյալ տարի Ադրբեջանը 15 էշ է ներմուծել Թուրքիայից: Ինչպես հունիսի 9-ին տեղեկացնում է թուրքական haberler.com կայքէջը, էշերից յուրաքանչյուրը, բացառությամբ մեկի, որի համար վճարվել է 11 հազար 500 դոլար, ներմուծվել է 18 հազար 200 ԱՄՆ դոլարով: Վճարումները Թուրքիային Բաքուն կատարել է Ադրբեջանի պետբյուջեի հաշվին:

Ադրբեջանական վիճակագրական ինստիտուտի տվյալներով, 2006-ից ի վեր Բաքվի վարչակազմը պետբյուջեից տարեկան 170 հազար դոլար է հատկացնում, որ տարբեր երկրներից, այդ թվում Թուրքիայից, էշեր ներմուծի: Ըստ թուրքական կայքէջի, «Ենի Մուսաֆաթ» թերթը «Այս էշերը պետական ո՞ր կառույցն է պատվիրում եւ ինչո՞ւ» վերնագրով հոդվածում հետեւյալ հարցադրումն է արել. «Մի՞թե Ադրբեջանում էշ չկա»: Ապա եւ ավելացրել է, որ անցյալ տարի պետականորեն Ադրբեջան էշ ներմուծելու նպատակով պետությունը մի ամբողջ հարստություն է վատնել:

Էշերի առաջին գլխաքանակը, ըստ ադրբեջանական թերթի, 160 հազար դոլարով 2006-ին Ադրբեջան է ներմուծվել Գերմանիայից, իսկ անցյալ տարի ադրբեջանական պետությունը Թուրքիայից պետական կարիքների համար 15 էշ է գնել եւ էշերի ներմուծման դիմաց Ադրբեջանի պետբյուջեից վճարել է 170 հազար 700 դոլար: Haberler.com կայքէջը պետբյուջեի հաշվին էշերի ներմուծումը համարում է առեղծվածային եւ նշում, որ ներմուծման բացահայտումն իրարանցում է առաջացրել Ադրբեջանում:

**Հ. Չ.**

# «21-ի հեռանկարներ» փառատոնում՝ «Ժամանակակից երաժշտություն»

Արդեն տասը տարի է, ինչ ստեղծվեց «21-ի հեռանկարներ» երաժշտական միջազգային փառատոնը՝ նպատակ ունենալով հայ հանդիսատեսին ներկայացնել բարձրարժեք երաժշտություն եւ ինչ-որ չափով նպաստել ժողովրդի երաժշտական մակարդակի բարձրացմանը: Երեկ հրավիրված ասուլիսի ընթացքում նման ձեւակերպում տվեց փառատոնի հիմնադիր **Ստեփան Ռոստոմյանը** եւ ներկայացրեց փառատոնի շրջանակներում իրականացվող նոր ծրագիրը՝ «Ժամանակակից երաժշտություն» խորագրով: Ծրագիրն իրականացնելուն աջակցել է անվանի ջութակահար Մովսես Պողոսյանը (ԱՄՆ): Նա բազմակողմանի գործունեություն է ծավալում որպես մենակատար, կամերային երաժիշտ, նոր երաժշտության խանդավառ տարածող եւ առաջատար ուսուցիչ: Իսկ հայ երաժշտությունն աշխարհին ներկայացնելու նպատակով Լոս Անջելեսում հիմնադրել եւ ղեկավարում է «Դիլիջան» կամերային երաժշտության շարքը: Հայաստանում Պողոսյանն ուսանել է Զորյանի եւ Մոկացյանի, իսկ Մոսկվայում՝ Վալերի Կլիմովի մոտ: Նա դեռ 19 տարեկանում դարձել է առաջին ամենաերիտասարդ առաջին մրցանակակիրը ԽՍՀՄ-ի ջութակահարների համամիութենական մրցույթում՝ Դ. Օյստրախից եւ Գ. Կրեմերից հետո: Պողոսյանը բազմաթիվ մրցույթների մրցանակակիր է եւ համագործակցում է շուրջ 10 հայտնի երաժշտական ընկերությունների հետ՝ աշխարհով մեկ համերգային շրջագայությունների մասնակցելով: Հենց այդ կապերն էլ նա օգտագործել է ու համաձայնության գալով «21-ի հեռանկարներ» փառատոնի ղեկավարության հետ, Հայաստան է հրավիրել աշխարհահռչակ մենակատարների, որոնք մեկտեղելով՝ Հայաստանում առաջին անգամ ներկայացնում են նոր ծրագիր: Նրանք երեք տարբեր ծրագրով են հանդես գալիս հայ երաժշտասերների առջեւ: Խմբում ընդգրկված են՝ Թոնի Առնոլդ՝ սոպրանո (ԱՄՆ), Մովսես Պողոսյան՝ ջութակ (ԱՄՆ), Ռոհան դե Սարամ՝ թավջութակ (Բրիտանիա), Ֆիլիպ Օ՛Քոնոր կլառնետ (ԱՄՆ), Արթուր Ավանեսով՝ դաշնամուր (Հայաստան): Թոնի Առնոլդը միջազգային ճանաչում է ստացել ժամանակակից վոկալ երկացանկի իր մեկնությամբ, ընդգրկելով նոր վոկալիզմից մինչեւ նորագույն բարդ ձեւերը, իր ծրագրում նա կատարել եւ ձայնագրել է մեր ժամանակների ականավոր կոմպոզիտորների երաժշտությունը, արժանանալով բազմաթիվ կոչումների: «Թավջութակի ֆենոմեն, այդպես են նրան անվանում այն բոլոր համերգասրահներում, որտեղ նվագել է «նոր երաժշտության չեմպիոն կատարող», «հազվագյուտ հանճար» տիտղոսներին արժանացած Ռոհան դե Սարամը, որը թավջութակ սկսել է նվագել 11 տարեկանից ու շրջել է աշխարհի գրեթե բոլոր երկրներով: Հայաստանում եղել է ճիշտ 50 տարի առաջ եւ այժմ էլ գտնում է.




«Հայ երաժշտասերների ընդունելության եւ երաժշտական ընկալունակության մեջ գրեթե տարբերություն չտեսա: Նրանք կարողանում են ճիշտ երաժշտությունը տարբերել, հասկանալ ու գնահատել: Երջանիկ եմ, որ մասնակցում եմ այս ծրագրին ու երբեք չեմ մոռանա, որ իմ առաջին դեբյուտը Կարնեգի հոլում 1960-ին եղել է Արամ Խաչատրյանի թավջութակի կոնցերտի կատարմամբ»:

Երիտասարդ կլառնետիստ ու սաքսոֆոնահար Ֆիլիպ Օ՛Քոնորը Կալիֆոռնիայի երկու համալսարաններում մասնակցել է միջազգային բազմաթիվ փառատոների ու արժանացել մրցանակների, միաժամանակ ձայնագրվել է բազմաթիվ կինոնկարների եւ հեռուստաշոուների համար: Նա ներկայումս դասավանդում է Փասադենայի Հին քաղաքի կոնսերվատորիայում եւ Ռիվերսայդի քոլեջներում:

Իսկ Արթուր Ավանեսովին հայ հանդիսատեսը ծանոթ է վաղուց: Ստեփան Ռոստոմյանի եւ Ելենա Աբաջյանի սանը կոմպոզիցիայի եւ դաշնամուրի ֆակուլտետը գերազանցությամբ ավարտելով, կարճ ժամանակում մեծ ճանաչում ձեռք բերեց ու նրա ստեղծագործությունները սկսեցին հնչել հեղինակավոր փառատոներում, անվանի երաժիշտների կատարմամբ: Այս փառատոնի ընթացքում բացի Օլիվեր Մեսիանի «Poemes pour Mi» սոպրանոյի եւ դաշնամուրի համար գործից կհնչի «Կվարտետ ժամանակի վերջի համար» ջութակի, կլառնետի, թավջութակի եւ դաշնամուրի համար գրված ստեղծագործությունը 8 մասից, նաեւ Արթուր Ավանեսովի ստեղծագործությունը՝ գրված ջութակի եւ դաշնամուրի համար: Փառատոնի ղեկավարը նշեց, որ մեծ պատիվ է նման անվանի երաժիշտներին տեսնել Հայաստանում, «21-ի հեռանկարներ» փառատոնի ծրագրում:

**ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ**

ՀԱՄԱՌՈՏ

## Ժանսեմի նկարների ցուցահանդես Փարիզում

**Փարիզի հանրահայտ պատկերասրահներից մեկում՝ կառավարության շենքին կից «Մասինյոն» սրահում հունիսի 3-ին բացվել է ֆրանսահայ նշանավոր նկարիչ Ժանսեմի (Հովհաննես Սեմերճյան) բնանկարների ցուցահանդես: «Աշխարհ» թերթը տեղեկացնում է, որ բացման արարողությունը տեղի է ունեցել հունիսի 3-ի երեկոյան: Ցուցահանդեսը բաց կլինի մինչեւ սեպտեմբերի 30-ը:**

**Պ. Ք.**

## Գրքի տոնավաճառ Գյումրիում

**Հունիսի 12-ին Գյումրիի ճեմափողոցում տեղի կունենա գրքերի ցուցահանդես-վաճառք: Այն կազմակերպել է «Արտբրիջ» գրախանութը՝ Գյումրիի «ԷԼԱՎ» գրախանութի հետ համատեղ: Կազմակերպիչների հավաստմամբ, ցուցահանդես-վաճառքի մասնակիցները հնարավորություն կունենան զրուցելու ներկայացված գրքերի հեղինակների հետ: Ցուցահանդես-վաճառքից զատ նույն օրը Գյումրիում կկայանա երկու՝ Վարդան Օսկանյանի «Անավարտ տասնամյակ» եւ Թաթուլ Հակոբյանի «Կանաչ եւ սեւ» գրքերի շնորհանդեսները: Հեղինակները ներկա են լինելու շնորհանդեսներին:**

## Շնորհանդես Անթիլիասում

**Անթիլիասի Մայրավանքում տեղի է ունեցել իրանահայ Կարեն Խանլարյանի «Հայ բնակչության էթնոկրոնական վերակերտումները Թուրքիայի հանրապետութիւնում (1923-2005թթ.)» աշխատության շնորհանդեսը: Գիրքը, որ միաժամանակ հեղինակի գիտական թեզն է, հրատարակվել է «Խաչիկ Պատիկյան հրատարակչական հիմնադրամի» հասույթով եւ Արամ Ա. Կաթողիկոսի հովանավորությամբ: Գիրքը ներկայացրել է Երվանդ Բամբուքյանը՝ ընդգծելով դրա արդիականությունը:**

**Արամ Ա. Կաթողիկոսն էլ իր խոսքում ընդգծել է Պատիկյան հրատարակչական հիմնադրամի դերակատարությունը, որ հատկապես ծանրակշիռ է քաղաքագիտությանը վերաբերող աշխատությունների հրատարակման հարցում: Վերջինը Խաչիկ Պատիկյանի ընտրությունն է եղել:**

**Ն. Պ.**

## Ռոժե Պլանշոնին նվիրված վավերագրական ֆիլմ

**Ֆրանսիացի անվանի բեմադրիչ, Լիոնի Կոմեդիայի թատրոնի (1953) հիմնադիր Ռոժե Պլանշոնը օրերս մահացել է աշխատանքի պահին, թատերական մի պիեսի ընթերցման ժամանակ: Փարիզի «Աշխարհ» թերթը նշում է, որ Պլանշոնը հիմնադրել է նաեւ Լիոնի արվարձան Վիլյորբանում գտնվող քաղաքային թատրոնը, որը գործել է 1957-2001 թթ. եւ որին շնորհվել է ազգային ժողովրդական թատրոնի կարգավիճակ:**

**Բեմադրիչի մահվան կապակցությամբ Ֆրանսիայի հեռուստատեսությունը նրան նվիրված վավերագրական ֆիլմ է ցուցադրել, որը մասնավորապես պատմում է Պլանշոնի վերջին բեմադրությունների մասին: Ֆիլմի դրվագներից մեկում երիտասարդ դերասան Հովնաթան Ավետիքյանը Պլանշոնի ղեկավարությամբ փորձեր է անում հույն ողբերգակ Սոֆոկլեսի «Էդիպը Կոլոնում» պիեսի ժամանակակից բեմադրության համար:**

**Պ. Ք.**

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի մաքսային ծառայության մասով թափուր պաշտոններ զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու մասին.

**ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱՊԱՐԱՏ**

**Կրտսեր պաշտոններ / բաց մրցույթ/**

1. Նախաքննության հսկողության վարչության Սյունիքի տարածաշրջանի բաժնի Մեղրիի բաժանմունքի մաքսային տեսուչ - 8միավոր

Իրականացնում է ապրանքների եւ տրանսպորտային միջոցների բացթողումը, ստուգում բաց թողնված բեռի համապատասխանությունը բեռնափոխադրման եւ ապրանքն ուղեկցող փաստաթղթերի հետ, կատարում համապատասխան ձեւակերպումներ:

2.Ներքին դիտարկումների եւ վերահսկողության վարչության Մաքսային մարմինների համալիր ստուգումների բաժնի մաքսային տեսուչ

Իրականացնում է համապատասխան ստուգումներ, կազմում հաշվետվություններ եւ ներկայացնում բաժնի պետին

3.Ներքին դիտարկումների եւ վերահսկողության վարչության Մաքսային մարմինների տեսչական աշխատանքների հսկողության բաժնի մաքսային տեսուչ

Իրականացնում է համապատասխան հսկողություն, կազմում հաշվետվություններ եւ ներկայացնում բաժնի պետին

4.Մաքսանենգության դեմ պայքարի եւ կրկնակի մաքսային հսկողության վարչության Գուգարքի բաժնի մաքսային տեսուչ

Իրականացնում է հատուկ կանխարգելիչ ու օպերատիվ գործողություններ մաքսանենգության,մաքսային կանոնների խախտումների բացահայտման ուղղությամբ

5.Մաքսանենգության դեմ պայքարի եւ կրկնակի մաքսային հսկողության վարչության Սյունիքի բաժնի մաքսային տեսուչ

Իրականացնում է հատուկ կանխարգելիչ ու օպերատիվ գործողություններ մաքսանենգության,մաքսային կանոնների խախտումների բացահայտման ուղղությամբ

6.Հարկային եւ մաքսային վարչարարության, ռազմավարության եւ պլանավորման վարչության Մաքսային ծրագրերի բաժնի մաքսային տեսուչ

Կազմում եւ բաժնի պետին է ներկայացնում մաքսային գործին առընչվող համապատասխան փաստաթղթերի նախագծեր

**ՄԱՔՍԱՏՈՒՆ**

**Կրտսեր պաշտոններ / բաց մրցույթ/**

1. Սյունիքի մաքսատան Մեղրիի մաքսային կետի ԱՄԸՀ 1-ին բաժանմունքի մաքսային տեսուչ - 2 միավոր

Իրականացնում է բաց թողնված ապրանքային եւ տրանսպորտային միջոցների համապատասխանությունը բեռնափոխադրման եւ ապրանքն ուղեկցող փաստաթղթերի հետ, կատարում համպատասխան ձեւակերպումներ:

2. Սյունիքի մաքսատան Մեղրիի մաքսային կետի ԱՄԸՀ 2-րդ բաժանմունքի մաքսային տեսուչ 2 միավոր

Իրականացնում է բաց թողնված ապրանքային եւ տրանսպորտային միջոցների համապատասխանությունը բեռնափոխադրման եւ ապրանքն ուղեկցող փաստաթղթերի հետ, կատարում համպատասխան ձեւակերպումներ:

3. Սյունիքի մաքսատան Մեղրիի մաքսային կետի ԱՄԸՀ 3-րդ բաժանմունքի մաքսային տեսուչ

Իրականացնում է բաց թողնված ապրանքային եւ տրանսպորտային միջոցների համապատասխանությունը բեռնափոխադրման եւ ապրանքն ուղեկցող փաստաթղթերի հետ, կատարում համպատասխան ձեւակերպումներ:

4. Սյունիքի մաքսատան Մեղրիի մաքսային կետի ԱՄԸՀ 4-րդ բաժանմունքի մաքսային տեսուչ

Իրականացնում է բաց թողնված ապրանքային եւ տրանսպորտային միջոցների համապատասխանությունը բեռնափոխադրման եւ ապրանքն ուղեկցող փաստաթղթերի հետ, կատարում համապատասխան ձեւակերպումներ:

Նշված թափուր պաշտոնները զբաղեցնելու համար պահանջվում է՝

**Կրտսեր պաշտոններ**

- բարձրագույն կրթություն ունեցող , հայերենին տիրապետող ՀՀ քաղաքացիներ

Դիմող ՀՀ քաղաքացիները պետք է ներկայացնեն հետեւյալ փաստաթղթերը՝

- դիմում մրցութային հանձնաժողովի անունով (ձեւը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս).

- տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների եւ աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմի(ների), վկայականի(ների), աշխատանքային գրքույկի (վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք համապատասխան մարմնից) պատճենները՝ մասնագիտական վերապատրաստման վկայականներ եւ հավաստագրեր

- արական սեռի անձինք՝ նաեւ զինգրքույկ կամ դրան փոխարինող փաստաթուղթ

- երկու գունավոր լուսանկար՝ 3X4 սմ չափսի:

- հայտարարություն այն մասին, որ ապագա աշխատանքը կապված չէ մերձավոր ազգականների /ծնող,ամուսին,եղբայր,քույր,զավակ, ամուսնու ծնող,եղբայր,քույր,զավակ/ մաքսային ծառայողի նկատմամբ անմիջական ենթակայության կամ վերահսկողության հետ

Մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը ներկայացնել անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող փաստաթղթով:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր ժամը 1000-ից մինչեւ 1300-ը, բացի շաբաթ եւ կիրակի օրերից:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 25.06.2009թ.ժամը 1300:

Մրցույթին մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող են դիմել ՀՀ ԿԱ ՊԵԿ մրցութային հանձնաժողով /Երեւան, Խորենացի 3, հեռ. 594-314 /:

Մրցույթը կանցկացվի 13.07.2009թ. ժամը 1100, ԱՏՄ շենքում՝ ք.Երեւան, Իսակովի 10:

Մրցույթի անցկացման վայրի, օրվա եւ ժամի հնարավոր փոփոխությունների մասին լրացուցիչ կիրառարակվի մամուլում ` մրցույթից առնվազն երկու շաբաթ առաջ:

Մրցույթի հարցաշարը կտեղադրվի Մաքսային ծառայության `www. customs.am կայքէջում

**Ծանոթություն**

Մաքսային ծառայության պաշտոնի չեն կարող նշանակվել այն անձինք, ովքեր

1/ դատական կարգով ճանաչվել են անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

2/ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով զրկված են որոշակի պաշտոն զբաղեցնելու իրավունքից.

3/ տառապում են այնպիսի հիվանդությամբ, որը մաքսային ծառայության պաշտոնի նշանակվելու դեպքում կարող է խոչընդոտել ծառայողական պարտականությունների կատարմանը եւ լիազորությունների իրականացմանը:

Այդ հիվանդությունների ցանկը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը

4/ դատապարտվել են հանցագործության համար, եւ դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ:

/ «Մաքսային ծառայության մասին» ՀՀ Օրենքի 9-րդ հոդված /

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից հուշադրամների ուրվագծերի ընտրության նպատակով անցկացվող հրապարակային մրցույթի կազմակերպման մասին*

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը (այսուհետեւ՝ ՀՀ ԿԲ) հայտարարում է հրապարակային մրցույթ՝

1. «Վահան Տերյանի ծննդյան 125-ամյակ»
2. «Րաֆֆու ծննդյան 175-ամյակ»
3. «Մովսես Խորենացու ծննդյան 1600-ամյակ»
4. «Լեոյի ծննդյան 150-ամյակ»
5. «Վարդգես Սուրենյանցի ծննդյան 150-ամյակ»
6. «Լեոնիդ Ենգիբարյանի ծննդյան 75-ամյակ»

հուշադրամների ուրվագծերի ընտրության համար:

Մրցույթին կարող են մասնակցել բոլոր ցանկացողները:

Մրցութային առաջարկությունները անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ ԿԲ՝ ք. Երեւան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6:

Մրցութային հայտերի ընդունման վերջին ժամկետն է 2009թ. հուլիսի 20-ը, ժամը 17-30:

Մրցույթի հայտերի բացման օրն ու ժամն է 2009թ. հուլիսի 20-ը, ժամը 17-30:

Մրցույթի արդյունքների ամփոփման նիստը հրավիրվում է 2009թ. հուլիսի 24-ին, ժամը 17-30:

Մրցույթին մասնակցելու հրապարակային ծանուցումը տեղադրված է ՀՀ ԿԲ ինտերնետային կայքում (www.cba.am):

Մրցույթին մասնակցելու ծանուցումը, ինչպես նաեւ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար ցանկացողները կարող են դիմել ՀՀ ԿԲ-ի վճարային համակարգերի եւ դրամաշրջանառության կարգավորման վարչություն՝

Հեռ.՝ +374 10 59 29 05, 56 16 55,
Ֆաքս՝ +374 10 56 74 23, 374 10 52 38 52
E-mail՝ nuneteryan@cba.am

*ԿԲ հասարակայնության հետ կապերի ծառայություն*

## Վերաֆինանսավորման տոկոսադրույքը սահմանվեց 6.00 տոկոս

**2009 թ. հունիսի 9-ի նիստում ԿԲ խորհուրդը որոշեց իջեցնել վերաֆինանսավորման տոկոսադրույքը 0.25 տոկոսային կետով՝ սահմանելով այն 6.00%:**

**2009 թ. մայիսին ապրիլի նկատմամբ արձանագրվել է 1.6% գնաճ, որի պարագայում 12-ամսյա գնաճը կազմել է 3.4%՝ շարունակելով գտնվել նպատակային միջակայքի ստորին հատվածում:**

**ԿԲ խորհուրդը փաստեց, որ գնաճի ընթացիկ զարգացումները հիմնականում համահունչ են կանխատեսվող ժամանակահատվածի համար նախանշված ուղղություններին: Այնուամենայնիվ, պայմանավորված ՀՆԱ-ի՝ սպասվածի համեմատ ավելի արագ տեմպերով նվազմամբ եւ արտարժույթի շուկայում նոր հավասարակշռության հաստատմամբ, այս պահին գերակշռում է գնաճային ռիսկերի դրսեւորման ցածր հավանականությունը:**

**Խորհուրդը գտնում է, որ վերոնշյալ զարգացումների պայմաններում նպատակահարմար է շարունակել տոկոսադրույքների իջեցման եւ ծավալային ընդլայնման ակտիվացման քաղաքականությունը՝ վարկավորումը խթանելու եւ տնտեսության վերականգնման տեմպերն արագացնելու նպատակով:**

***ԿԲ հասարակայնության հետ կապերի ծառայություն***

# Գագիկ Ծառուկյանը հերթական պարգեւները հանձնեց




Վերջին տարիներին հայ ծանրորդները մեդալների հարուստ ավարով են տուն վերադառնում միջազգային մրցումներից` վերականգնելով մարզաձեւի երբեմնի լավ ավանդույթները: Նախորդ տարիների հաղթարշավն իր շարունակությունն է ստացել նաեւ ընթացիկ մրցաշրջանում: Ապրիլին Բուխարեստում կայացած ծանրամարտի Եվրոպայի առաջնությունում մեր փառաբանված ծանրորդ, օլիմպիական չեմպիոն Օգսեն Միրզոյանի որդին` Առաքելը հիանալի ելույթ ունեցավ, արժանանալով չեմպիոնի տիտղոսին: Նազիկ Ավդալյանն ու Հռիփսիմե Խուրշուդյանը դարձան արծաթե մրցանակակիրներ: Ընդհանուր առմամբ, Բուխարեստում մեր հավաքականը երկամարտում ու տարբեր վարժություններում 10 մեդալ նվաճեց (2 ոսկե, 6 արծաթե, 2 բրոնզե): Վերջերս էլ ծանրամարտի աշխարհի պատանեկան առաջնության փոխչեմպիոն հռչակվեց Սմբատ Մարգարյանը:

Արդեն գեղեցիկ ավանդույթ են դարձել ՀԱՕԿ-ի նախագահ Գագիկ Ծառուկյանի կողմից մեր անվանի մարզիկների պարգեւատրման արարողությունները: Երեկ նա իր հերթական նվերները մատուցեց ծանրորդներին: Առաքել Միրզոյանին հանձնվեցին «Նիվա» մակնիշի ավտոմեքենայի բանալիները: Նազիկ Ավդալյանը, Հռիփսիմե Խուրշուդյանը, Սմբատ Մարգարյանը, նրանց անձնական մարզիչներ Օգսեն Միրզոյանը, Արտակ Ներսիսյանը, Արման Ղազարյանը, Էդուարդ Կիզօղլյանը, կանանց հավաքականի ավագ մարզիչ Արտաշես Ներսիսյանը, պատանեկան հավաքականի մարզիչ Հրանտ Տոնոյանն ու հավաքականի բժիշկ Նիկոլայ Դեմուրչյանը դրամական պարգեւներ ստացան:

Շնորհավորելով պարգեւատրվածներին, ՀԱՕԿ-ի նախագահը մասնավորապես նշեց. «Օր օրի մեր հաղթանակները ավելի նշանակալի են դառնում: Մեր ճանաչված ծանրորդ Օգսեն Միրզոյանի որդին գնաց հոր հետքերով, բարձր պահեց Հայաստանի մարզական պատիվը` արժանանալով Եվրոպայի չեմպիոնի եւ մրցաշարի լավագույն ծանրորդի տիտղոսներին: Ժամանակին եթե մի փոքր հետեւողական եւ ուշադիր լինեին Աշոտ Դանիելյանի նկատմամբ, նա աշխարհի ուժեղագույն ծանրորդը կդառնար: Այսօր թե՛ պետությունը, թե՛ ՀԱՕԿ-ը, սպորտկոմիտեն ու ֆեդերացիաները պատշաճ ուշադրության կենտրոնում են պահում մարզիկներին, որոնք իրենց քրտնաջան աշխատանքով փորձում են վարձահատույց լինել: Պարգեւատրման այս արարողությունը մի փոքր հետաձգել էինք քաղաքապետի ընտրությունների պատճառով, որպեսզի ավելորդ խոսակցություններ չլինեին, թե ընտրակաշառք են բաժանում: Փոքր ազգ լինելով, մենք մեր ուժը կարողանում ենք դրսեւորել աշխարհում: Այսօր ծանրամարտում, ըմբշամարտում, բռնցքամարտում ու շախմատում մենք առաջատար դիրքեր ենք զբաղեցնում աշխարհում: Շնորհավորում եմ պարգեւատրվածներին ու նորանոր հաջողություններ եմ մաղթում»:

Պարգեւատրվածների անունից շնորհակալական խոսք ասաց Օգսեն Միրզոյանը` հավաստելով, որ Առաքելն իր հնարավորությունների սահմաններում ամեն ինչ կանի այսուհետեւ եւս բարձր պահելու Հայաստանի մարզական պատիվը:

ՌԵԿՈՐԴԱՅԻՆ ՏՐԱՆՍՖԵՐ

# Կական տեղափոխվեց «Ռեալ»

Համաշխարհային ֆուտբոլի «աստղերից» մեկի` բրազիլացի Կակայի տեղափոխությունը «Միլանից» «Ռեալ» պաշտոնապես տեղի ունեցավ: Կական 6 տարվա պայմանագիր է կնքել «Ռեալի» հետ: Թեեւ պաշտոնապես չի հայտարարվել նրա տրանսֆերային արժեքը, սակայն ըստ տարբեր աղբյուրների «Ռեալը» Կակայի համար 65-68 մլն եվրո է վճարել: Իսկ բրազիլացի ֆուտբոլիստի տարեկան աշխատավարձը կկազմի 9 մլն եվրո: Նշենք, որ Կակայի տրանսֆերը համաշխարհային ֆուտբոլի պատմության մեջ ռեկորդային է: Մինչ այդ ամենաբարձր գինը` 65 մլն դոլար 2001-ին վճարել էր «Ռեալը» «Յուվենտուսին» Զինեդին Զիդանի տեղափոխման դիմաց: Հիշեցնենք նաեւ, որ ձմռանը «Մանչեսթր Սիթին» Կակայի համար 100 մլն եվրո էր առաջարկել, սակայն «Միլանը» հրաժարվել էր գործարքից:



Կական ներկայումս գտնվում է Բրազիլիայի հավաքականի ուսումնամարզական բազայում եւ նախապատրաստվում է Պարագվայի հետ այսօր կայանալիք աշխարհի առաջնության ընտրական մրցախաղին: Այնուհետեւ նա ազգային հավաքականի կազմում կմեկնի Հարավաֆրիկյան Հանրապետություն` մասնակցելու կոնֆեդերացիաների գավաթի խաղարկությանը:

Լրագրողների հետ հանդիպման ժամանակ Կական իր տեղափոխությունը բացատրել է համաշխարհային ֆինանսական ճգնաժամով. «Համաշխարհային ֆինանսական ճգնաժամը շատ ակումբների վրա է ազդել, այդ թվում նաեւ «Միլանի»: Ուստի եկանք այն համոզման, որ իմ տեղափոխությունը լավագույն տարբերակն է: Սա տնտեսական որոշում է: Պրոֆեսիոնալ առումով «Միլանի» հետ մեր ճանապարհները բաժանվեցին, սակայն հոգեպես կապը թիմի հետ մշտապես կուղեկցի ինձ: Ինչ վերաբերում է այն հարցին, թե ո՞ր համարի մարզաշապիկը կնախընտրեմ, ապա չեմ վերցնի 5 համարը, որով Զինեդին Զիդանն էր խաղում «Ռեալում»: Ինձ դուր է գալիս 18 համարը, որի հետ հաճելի հիշողություններ են կապված: Հուսով եմ, որ «Բարսելոնի» գերիշխանությանը վերջ կտրվի, իսկ իմ նոր ակումբը նորանոր տիտղոսների կարժանանա»:

Կական «Միլանում» հայտնվել էր 2003-ին` տեղափոխվելով բրազիլական «Սան Պաուլո» ակումբից, որտեղ ֆուտբոլիստի կարիերան սկսել էր 18 տարեկանում: Նրա տեղափոխման համար «Միլանը» 8,5 մլն դոլար էր վճարել: Այդ տարի Կական դարձավ Իտալիայի չեմպիոն: Հաջորդ տարի նա ճանաչվեց չեմպիոնների լիգայի մրցաշարի լավագույն կիսապաշտպան: 2007-ին նա «Միլանի» կազմում նվաճեց չեմպիոնների գավաթը` դառնալով մրցաշարի լավագույն ռմբարկու: Նույն տարում նա ճանաչվեց նաեւ Եվրոպայի եւ աշխարհի լավագույն ֆուտբոլիստ:

Կական դարձավ Ֆիորենցինո Պերեսի առաջին ձեռքբերումը «Միլանի» նախագահի պաշտոնը զբաղեցնելուց հետո: Ժամանակին նա թիմ էր հրավիրել համաշխարհային ֆուտբոլի «աստղեր» Դեւիդ Բեքհեմին, Ռոնալդոյին ու Զինեդին Զիդանին:

### ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատակազմի զինվորական դատախազության կենտրոնական մարմնի տարածքային վարչության գլխավոր մասնագետի 2 թափուր պաշտոնների զբաղեցման համար անցկացվող բաց մրցույթի**
**/Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատակազմ/**

***ՀՀ դատախազության աշխատակազմում պետական ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով սահմանված հիմնական գործառույթների համառոտ նկարագիրը.***

Վարչության աշխատանքների վերաբերյալ զինվորական դատախազի նախապատրաստած հրամանների, ցուցումների ու այլ փաստաթղթերի վերաբերյալ մեթոդական պարզաբանումների եւ ուղեցույցների մշակումը, դրանց վերաբերյալ եզրակացություններ տալը, անհրաժեշտ նյութեր եւ տեղեկատվություն նախապատրաստելը, փաստաթղթաշրջանառության վարման աշխատանքները, ինչպես նաեւ օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված իր լիազորություններից բխող այլ գործառույթներ իրականացնելը եւ այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ (սահմանափակումներ) կրելը:

***ՀՀ դատախազության աշխատակազմում պետական ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով սահմանված պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների եւ աշխատանքային ունակությունների տիրապետման վերաբերյալ ներկայացվող պահանջները.***

ա) ունի բարձրագույն իրավաբանական կամ այլ մասնագիտական բարձրագույն կրթություն, բ) ունի դատախազական (պետական) ծառայության պաշտոններում երկու տարվա ստաժ եւ դատախազական ծառայության առնվազն 1-ին դասի կրտսեր ծառայողի դասային աստիճան կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական կամ քաղաքացիական պաշտոն-ներում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ, գ) իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաեւ տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն, դ) անհրաժեշտ գիտելիքներ եւ տեղեկատվություն իր սպասարկման բնագավառի մասին, ե) համակարգչով եւ ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն, գրական հայերենի պատշաճ իմացություն, առնվազն մեկ օտար լեզվի տիրապետում:

***Փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետն է «25» հունիսի 2009թ.:***

***Մրցույթն անցկացվելու է 2009թ. հուլիսի 14-ին ժամը «1100»-ին ՀՀ գլխավոր դատախազության շենքում /ք.Երեւան, Վ.Սարգսյան 5/ :***

***Մրցույթի նախապատրաստական աշխատանքներն իրականացվում են ՀՀ գլխավոր դատախազության շենքում /ք.Երեւան, Վ.Սարգսյան 5, հեռախոս 511-627, 511-538/:***

*10.06.2009թ.*

### ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատակազմի զինվորական դատախազության կենտրոնական մարմնի տարածքային վարչության առաջին կարգի մասնագետի թափուր պաշտոնի զբաղեցման համար անցկացվող բաց մրցույթի**
**/Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատակազմ/**

***ՀՀ դատախազության աշխատակազմում պետական ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով սահմանված հիմնական գործառույթների համառոտ նկարագիրը.***

Դատախազությունում ստացվող փաստաթղթերի գրանցման եւ հասցեատերերին հանձնման ապահովումը, փաստաթղթային սպասարկման իրականացումը, փաստաթղթաշրջանառության վարման աշխատանքները, վարչության առջեւ դրված գործառույթներից եւ խնդիրներից բխող իրավական ակտերի ու այլ փաստաթղթերի պահպանության եւ արխիվացման աշխատանքների իրականացումը, դատախազությունից առաքվող փաստաթղթերի եւ գործերի գրանցման ու առաքման ապահովումը, անհրաժեշտ նյութեր եւ տեղեկատվություն նախապատրաստելը, համակարգչային մուտքագրման եւ ելքագրման աշխատանքների իրականացումը, ինչպես նաեւ օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված իր լիազորություններից բխող այլ գործառույթներ իրականացնելը եւ այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ (սահմանափակումներ) կրելը:

***ՀՀ դատախազության աշխատակազմում պետական ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով սահմանված պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների եւ աշխատանքային ունակությունների տիրապետման վերաբերյալ ներկայացվող պահանջները.***

ա) միջին մասնագիտական կրթություն: Յուրաքանչյուր ստորադաս խմբում դատախազական ծառայության անցնելու համար բավարար է ավելի բարձր խմբի համար սահմանված պահանջները բավարարելը, բ) իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի նվազագույն իմացություն, ինչպես նաեւ տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն, գ) նվազագույն գիտելիքներ իր սպասարկման բնագավառի մասին, դ) համակարգչով աշխատելու ունակություն, ե) գրական հայերենի պատշաճ իմացություն:

**Փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետն է «25» հունիսի 2009թ.:**

**Մրցույթն անցկացվելու է 2009թ. հուլիսի 16-ին ժամը «1100»-ին ՀՀ գլխավոր դատախազության շենքում /ք.Երեւան, Վ.Սարգսյան 5/ :**

**Մրցույթի նախապատրաստական աշխատանքներն իրականացվում են ՀՀ գլխավոր դատախազության շենքում /ք.Երեւան, Վ.Սարգսյան 5, հեռախոս 511-627, 511-538/:**

*10.06.2009թ.*

### ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատակազմի Երեւանի, Լոռու, Սեւանի, Գորիսի, Եղեգնաձորի, թիվ 1, թիվ 2, թիվ 3 կայազորների զինվորական դատախազությունների տարածքային բաժինների առաջատար մասնագետների 8 թափուր պաշտոնների զբաղեցման**
**համար անցկացվող բաց մրցույթի**
**/Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատակազմ/**

***ՀՀ դատախազության աշխատակազմում պետական ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով սահմանված հիմնական գործառույթների համառոտ նկարագիրը.***

Անհրաժեշտ նյութեր եւ տեղեկատվություն, առաջարկություններ, տեղեկանքներ, զեկուցագրեր եւ այլ գրություններ նախապատրաստելը, աշխատանքի ծրագրին համապատասխան բաժնի եւ կայազորի զինվորական դատախազության գործունեության հետ կապված աշխատանքների, համակարգչային մուտքագրման եւ ելքագրման աշխատանքների իրականացումը, դատախազությունում ստացվող փաստաթղթերի գրանցումը եւ հանձնումը հասցեատերերին, դատախազության փաստաթղթաշրջանառության աշխատանքների, փաստաթղթերի պահպանման եւ դրանց արխիվացման աշխատանքների իրականացումը, ինչպես նաեւ օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված իր լիազորություններից բխող այլ գործառույթներ իրականացնելը եւ այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ (սահմանափակումներ) կրելը:

***ՀՀ դատախազության աշխատակազմում պետական ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով սահմանված պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների եւ աշխատանքային ունակությունների տիրապետման վերաբերյալ ներկայացվող պահանջները.***

ա) միջին մասնագիտական կրթություն: Յուրաքանչյուր ստորադաս խմբում դատախազական ծառայության անցնելու համար բավարար է ավելի բարձր խմբի համար սահմանված պահանջները բավարարելը, բ) իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի նվազագույն իմացություն, ինչպես նաեւ տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն, գ) նվազագույն գիտելիքներ իր սպասարկման բնագավառի մասին, դ) համակարգչով աշխատելու ունակություն, ե) գրական հայերենի պատշաճ իմացություն:

**Փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետն է «25» հունիսի 2009թ.:**

**Մրցույթն անցկացվելու է 2009թ. հուլիսի 16-ին ժամը «1100»-ին ՀՀ գլխավոր դատախազության շենքում /ք.Երեւան, Վ.Սարգսյան 5/ :**

**Մրցույթի նախապատրաստական աշխատանքներն իրականացվում են ՀՀ գլխավոր դատախազության շենքում /ք.Երեւան, Վ.Սարգսյան 5, հեռախոս 511-627, 511-538/:**

*10.06.2009թ.*

### ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատակազմի տեղեկատվության եւ ծրագրային ապահովման բաժնի գլխավոր մասնագետի թափուր պաշտոնի զբաղեցման բաց մրցույթի**
**/Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատակազմ/**

**ՀՀ դատախազության աշխատակազմում պետական ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով սահմանված հիմնական գործառույթների համառոտ նկարագիրը.**

Համակարգիչների եւ համակարգչային ցանցերի ղեկավարում:

***ՀՀ դատախազության աշխատակազմում պետական ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով սահմանված այդ պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների եւ աշխատանքային ունակությունների տիրապետման վերաբերյալ ներկայացվող պահանջները.***

ա) ունի մասնագիտական բարձրագույն կրթություն, բ) ունի դատախազական (պետական) ծառայության պաշտոններում երկու տարվա ստաժ եւ դատախազական ծառայության առնվազն 1-ին դասի կրտսեր ծառայողի դասային աստիճան կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական կամ քաղաքացիական պաշտոն-ներում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ, գ) իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաեւ տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն, դ) անհրաժեշտ գիտելիքներ եւ տեղեկատվություն իր սպասարկման բնագավառի մասին, համակարգչով եւ ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն, գրական հայերենի պատշաճ իմացություն, առնվազն մեկ օտար լեզվի իմացություն:

**Փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետն է «25» հունիսի 2009թ.:**

**Մրցույթն անցկացվելու է 2009թ. հուլիսի 14-ին ժամը «1100»-ին ՀՀ գլխավոր դատախազության շենքում /ք.Երեւան, Վ.Սարգսյան 5/ :**

**Մրցույթի նախապատրաստական աշխատանքներն իրականացվում են ՀՀ գլխավոր դատախազության շենքում /ք.Երեւան, Վ.Սարգսյան 5, հեռախոս 511-627, 511-538/:**

*10.06.2009թ.*

### ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատակազմի Արագածոտնի մարզի դատախազության տարածքային բաժնի գլխավոր մասնագետի թափուր պաշտոնի զբաղեցման համար անցկացվող բաց մրցույթի**
**/Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատակազմ/**

***ՀՀ դատախազության աշխատակազմում պետական ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով սահմանված հիմնական գործառույթների համառոտ նկարագիրը.***

Բաժնի աշխատանքների վերաբերյալ մարզի դատախազի նախապատրաստած հրամանների, ցուցումների ու այլ փաստաթղթերի վերաբերյալ մեթոդական պարզաբանումների եւ ուղեցույցների մշակումը, դրանց վերաբերյալ եզրակացություններ տալը, անհրաժեշտ նյութեր եւ տեղեկատվություն նախապատրաստելը, նախապատրաստվող փաստաթղթերի նախագծերի մշակման աշխատանքներին մասնակցելը, փաստաթղթաշրջանառության վարման աշխատանքները, առաջարկություններ, տեղեկանքներ, զեկուցագրեր եւ այլ գրություններ նախապատրաստելը, ինչպես նաեւ օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված իր լիազորություններից բխող այլ գործառույթներ իրականացնելը եւ այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ (սահմանափակումներ) կրելը:

***ՀՀ դատախազության աշխատակազմում պետական ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով սահմանված պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների եւ աշխատանքային ունակությունների տիրապետման վերաբերյալ ներկայացվող պահանջները.***

ա) ունի բարձրագույն իրավաբանական կամ այլ մասնագիտական բարձրագույն կրթություն, բ) ունի դատախազական (պետական) ծառայության պաշտոններում երկու տարվա ստաժ եւ դատախազական ծառայության առնվազն 1-ին դասի կրտսեր ծառայողի դասային աստիճան կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ, գ) իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաեւ տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն, դ) անհրաժեշտ գիտելիքներ եւ տեղեկատվություն իր սպասարկման բնագավառի մասին, ե) համակարգչով եւ ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն, գրական հայերենի պատշաճ իմացություն, առնվազն մեկ օտար լեզվի տիրապետում:

**Փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետն է «25» հունիսի 2009թ.:**

**Մրցույթն անցկացվելու է 2009թ. հուլիսի 14-ին ժամը «1100»-ին ՀՀ գլխավոր դատախազության շենքում /ք.Երեւան, Վ.Սարգսյան 5/ :**

**Մրցույթի նախապատրաստական աշխատանքներն իրականացվում են ՀՀ գլխավոր դատախազության շենքում /ք.Երեւան, Վ.Սարգսյան 5, հեռախոս 511-627, 511-538/:**

*10.06.2009թ.*

### ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատակազմի Գեղարքունիքի մարզի դատախազության տարածքային բաժնի առաջատար մասնագետի թափուր պաշտոնի զբաղեցման համար անցկացվող բաց մրցույթի**
**/Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատակազմ/**

***ՀՀ դատախազության աշխատակազմում պետական ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով սահմանված հիմնական գործառույթների համառոտ նկարագիրը.***

Բաժնի առջեւ դրված գործառույթներից եւ խնդիրներից բխող իրավական ակտերի ու այլ փաստաթղթերի պահպանության եւ արխիվացման աշխատանքները, անհրաժեշտ նյութեր եւ տեղեկատվություն նախապատրաստելը, փաստաթղթաշրջանառության վարման աշխատանքները, առաջարկություններ, տեղեկանքներ, զեկուցագրեր եւ այլ գրություններ նախապատրաստելը, համակարգչային մուտքագրման եւ ելքագրման աշխատանքների իրականացումը, ինչպես նաեւ օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված իր լիազորություններից բխող այլ գործառույթներ իրականացնելը եւ այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ (սահմանափակումներ) կրելը:

***ՀՀ դատախազության աշխատակազմում պետական ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով սահմանված պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների եւ աշխատանքային ունակությունների տիրապետման վերաբերյալ ներկայացվող պահանջները.***

ա) միջին մասնագիտական կրթություն: Յուրաքանչյուր ստորադաս խմբում դատախազական ծառայության անցնելու համար բավարար է ավելի բարձր խմբի համար սահմանված պահանջները բավարարելը, բ) իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի նվազագույն իմացություն, ինչպես նաեւ տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն, գ) նվազագույն գիտելիքներ իր սպասարկման բնագավառի մասին, դ) համակարգչով աշխատելու ունակություն, ե) գրական հայերենի պատշաճ իմացություն:

**Փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետն է «25» հունիսի 2009թ.:**

**Մրցույթն անցկացվելու է 2009թ. հուլիսի 16-ին ժամը «1100»-ին ՀՀ գլխավոր դատախազության շենքում /ք.Երեւան, Վ.Սարգսյան 5/ :**

**Մրցույթի նախապատրաստական աշխատանքներն իրականացվում են ՀՀ գլխավոր դատախազության շենքում /ք.Երեւան, Վ.Սարգսյան 5, հեռախոս 511-627, 511-538/:**

*10.06.2009թ.*

### ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատակազմի ֆինանսատնտեսական վարչության գլխավոր մասնագետի թափուր պաշտոնի զբաղեցման համար անցկացվող բաց մրցույթի**
**/Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատակազմ/**

***ՀՀ դատախազության աշխատակազմում պետական ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով սահմանված հիմնական գործառույթների համառոտ նկարագիրը.***

Վարչության նախապատրաստած` ՀՀ գլխավոր դատախազի, ՀՀ գլխավոր դատախազի տեղակալների, ՀՀ դատախազության աշխատակազմի ղեկավարի հրամանների, այլ իրավական ակտերի ու փաստաթղթերի վերաբերյալ մեթոդական պարզաբանումների եւ ուղեցույցների մշակման ապահովումը, դրանց վերաբերյալ եզրակացություններ տալը, անհրաժեշտ նյութեր եւ տեղեկատվություն նախապատրաստելը, ինչպես նաեւ օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված իր լիազորություններից բխող այլ գործառույթներ իրականացնելը եւ այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ (սահմանափակումներ) կրելը:

***ՀՀ դատախազության աշխատակազմում պետական ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով սահմանված պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների եւ աշխատանքային ունակությունների տիրապետման վերաբերյալ ներկայացվող պահանջները.***

ա) ունի բարձրագույն իրավաբանական կամ այլ մասնագիտական բարձրագույն կրթություն, բ) ունի դատախազական (պետական) ծառայության պաշտոններում երկու տարվա ստաժ եւ դատախազական ծառայության առնվազն 1-ին դասի կրտսեր ծառայողի դասային աստիճան կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ, գ) իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաեւ տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն, դ) անհրաժեշտ գիտելիքներ եւ տեղեկատվություն իր սպասարկման բնագավառի մասին, ե) համակարգչով եւ ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն, գրական հայերենի պատշաճ իմացություն, առնվազն մեկ օտար լեզվի տիրապետում:

**Փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետն է «25» հունիսի 2009թ.:**

**Մրցույթն անցկացվելու է 2009թ. հուլիսի 14-ին ժամը «1100»-ին ՀՀ գլխավոր դատախազության շենքում /ք.Երեւան, Վ.Սարգսյան 5/ :**

**Մրցույթի նախապատրաստական աշխատանքներն իրականացվում են ՀՀ գլխավոր դատախազության շենքում /ք.Երեւան, Վ.Սարգսյան 5, հեռախոս 511-627, 511-538/:**

*10.06.2009թ.*

### ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատակազմի դատախազների սպասարկման եւ արարողակարգի վարչության առաջատար մասնագետի երեք թափուր պաշտոնների զբաղեցման համար անցկացվող բաց մրցույթի**
**/Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատակազմ/**

***ՀՀ դատախազության աշխատակազմում պետական ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով սահմանված հիմնական գործառույթների համառոտ նկարագիրը.***

Վարչության պետի, աշխատակազմի ղեկավարի եւ դատախազների հանձնարարությամբ անհրաժեշտ նյութեր եւ տեղեկատվություն նախապատրաստելը, նախապատրաստվող փաստաթղթերի նախագծերի մշակման աշխատանքներին մասնակցելը, ինչպես նաեւ օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված իր լիազորություններից բխող այլ գործառույթներ իրականացնելը եւ այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ (սահմանափակումներ) կրելը:

***ՀՀ դատախազության աշխատակազմում պետական ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով սահմանված պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների եւ աշխատանքային ունակությունների տիրապետման վերաբերյալ ներկայացվող պահանջները.***

ա) ունի բարձրագույն իրավաբանական կամ այլ մասնագիտական բարձրագույն կրթություն, բ) ունի դատախազական (պետական) ծառայության պաշտոններում երկու տարվա ստաժ եւ դատախազական ծառայության առնվազն 1-ին դասի կրտսեր ծառայողի դասային աստիճան կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ, գ) իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաեւ տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն, դ) անհրաժեշտ գիտելիքներ եւ տեղեկատվություն իր սպասարկման բնագավառի մասին, ե) համակարգչով եւ ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն, գրական հայերենի պատշաճ իմացություն, առնվազն մեկ օտար լեզվի տիրապետում:

**Փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետն է «25» հունիսի 2009թ.:**

**Մրցույթն անցկացվելու է 2009թ. հուլիսի 16-ին ժամը «1100»-ին ՀՀ գլխավոր դատախազության շենքում /ք.Երեւան, Վ.Սարգսյան 5/:**

**Մրցույթի նախապատրաստական աշխատանքներն իրականացվում են ՀՀ գլխավոր դատախազության շենքում /ք.Երեւան, Վ.Սարգսյան 5, հեռախոս 511-627, 511-538/:**

*10.06.2009թ.*

*Տես էջ 8*

